№ 64 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 2 1904 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 2 № 64

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խօսողներ և գործողներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Ստաւրոպոլից. Նամակ Ալէքսանդրօպոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. —ՀԵՌԱԳԻՐ-ՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԽՕՍՈՂՆԵՐ ԵՒ ԳՈՐԾՈՂՆԵՐ

—

Խօսողներ շատ ունենք, նոյն իսկ չափից դուրս։ Իսկ գործողնե՞ր։

Տարբերութիւնը այս երկու տիպերի մէջ մեծ է։ Խօսողը միշտ մեծ ծրագիրներից, բարդ խնդիրներից է բռնում։ Փորձեցէք նրա մօտ հարց դնել՝ թէ, օրինակ, ինչ պէտք է անել ժողովրդական տգիտութեան դէմ, ինչպէս պահպանել հասարակութիւնը վարակից, այլասերող ախտերից, ինչ ուղղութեամբ մօտենալ հասարակ ժողովրդին, որպէս զի կարելի լինի նրան հասկացնել, թէ պէտք է թողնել նահապետական կուլտուրայի անզօր զէնքերը և նորագոյն գործիքներով դուրս գալ բնութեան մէջ, կեանքի կարիքները հոգալու համար։ Դուք կը տաք այդպիսի հարցեր։ Եւ այն պարոնները, որոնք միայն խօսել գիտեն, ձեր առջև բաց կանեն մեծագործութիւնների փքուն, լայնածաւալ, բայց գեղեցիկ համով-հոտով ծրագիրներ։ Եւ որովհետև մեր կեանքում հրաշքներ ու մեծագործութիւններ կատարելը շատ դժուար է, եթէ ոչ միանգամայն անկարելի, ուստի գեղեցիկ խօսքերը դուք ընդունում էք իբրև փայլուն հրախաղութիւն և համոզվում էք, որ մեզանում, ճիշդ որ, գործ կատարելը անկարելի է։

Բոլորովին ուրիշ բան է գործողը։ Նա գիտէ, որ կեանքի մէջ ամեն բարեկեցութիւն հիմնված է դրսից մանր ու անհետաքրքրական երևացող մանր ու փոքրիկ բարեկարգութիւնների վրա, նա գիտէ, որ կուլտուրական առաջադիմութիւնը նուաճվում է քայլ առ քայլ, փոքրիկ գործերով, համեստ սկզբնաւորութիւններով։ Եւ նա աշխատում է մի որ և իցէ բարի գործով, մի գեղեցիկ ձեռնարկութեամբ օգուտ բերել հասարակութեան։ Հերոսների ու մեծագործութիւնների դարը անցել է։ Այժմ ամեն մի մեծ ձեռնարկութիւն հիմնվում է հարիւրաւոր, հազարաւոր համեստ աշխատողների համերաշխ գործակցութեան վրա։ Եւ այդ պատճառով գործ սիրողները առանց աղմուկ հանելու, առանց երկար ու բարակ ճարտասանութիւն անելու, պարտք են համարում փոքրիկ բաներ սկսել, զարգացնել։ Իւրաքանչիւր այդպիսի գործ ինքն ըստ ինքեան վերցրած՝ գուցէ շատ է խեղճ ու անկարող։ Բայց երևակայեցէք այդպիսի գործերի մի մեծ համախմբում, մի ամբողջ ցանց. այն ժամանակ ամեն մի փոքրութիւն այժի նշանակութիւն է ստանում և հասարակութեան եր անկութիւնը ապահովվում է այդ ոյժերի միաբանութեամբ։

Խօսողներ շատ ունենք։ Իսկ գործողնե՞ր։

Այս հարցը յիշեցինք մենք, ստանալով Նոր-Զուղայից մի մանրամասն տպագրած հաշիւ այն բոլոր հաստատութիւնների մասին, որոնք գոյութիւն ունեն այդ մի բուռն գաղթական հայերի մէջ։

Մենք յիշում ենք, թէ վերջին հինգվեց տարիներում որքան մեծամեծ ծրագիրներ առաջարկվեցին մեր մամուլի մէջ պարսկահայերի դրութիւնը լաւացնելու համար։ Կար մի ամբողջ ուսումնարանական սիստեմի հարց, կային կենտրոնական, բարձրագոյն, գիւղատնտեսական, տեխնիքական և այլ տիպի դպրոցների առանձին-առանձին հարցեր։ Աղմուկ, թմբկահարութիւն, բանակռիւներ—որքան կամենաք։ Այդպէս էին անում նրանք, որոնք միայն խօսել գիտեն։ Եւ ոչինչ դուրս չեկաւ այդ խօսքերից, չէր էլ կարող դուրս գալ...

Մինչդեռ Նոր-Զուղայում գործողները առանց աղմուկների արդէն մի շարք համակրելի հիմնարկութիւններ ունեն, փոքրիկ, համեստ հիմնարկութիւններ, բայց մէթէ բանը փոքրութեան մէջ է։ Մեզ ուղարկած հաշուից երևում է, որ Նոր-Զուղայում կան. 1) Աղքատների Արկղ, 2) Հիւանդախնամ Ընկերութիւն, 3) Հայոց հեաց Բարեգործական Ընկերութիւն, 4) Կատարինեան Արհեստանոց։ Բացի դրանից կառուցվում է Աղքատանոց, բացվել են 4 գիւղերում դպրոցներ, չորս դպրոց էլ գոյութիւն ունի իր Նոր-Զուղայի մէջ։

Երբ նայում էք այդ հիմնարկութիւնների առանձին-առանձին հաշիւներին, տեսնում էք նրանց մէջ փոքրիկ մուտքեր և փոքրիկ էլ ծախսեր։ Մեծ-մեծ խօսողներին դրանք գուցէ չը գոհացնեն, գուցէ նոյն իսկ ծիծաղելի թւան։ Բայց գործ սիրողները կարող են միանգամայն վստահ լինել, որ բէալականը, իսկապէս օգտակարը նրանք են անում։ Որքան էլ փոքրիկ և նօսր լինի այդ բարի ձեռնարկութիւնների ցանցը, բայց երբ դուք մի բօպէ մտածում էք, որ այդ բոլորը մի խեղճ ու կորած պարսկահայ գաղթականութեան համար է, չէք կարող չը լցվել անհուն շնորհակալութեամբ դէպի գործողները։

Այսպէս է մի հասարակութիւն հող պատրաստում իր բարօրութիւն համար։

Գործողներ և ոչ խօսողներ...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

С. С. Меликъ Адамовъ. Присяж. повѣренный. Практическое руководство для составленія бумагъ по дѣламъ гражданскаго судопроизводства въ Закавказскомъ краѣ. Тифлисъ, 1904 г.

Մեր առաջ դրած է մի գիրք, որի հրատարակութեան նպատակը ինքը հեղինակը ընդարձակօրէն պարզում է իր առաջաբանի մէջ։

Մեր ներկայ հասարակական կեանքի հրատապ խնդիրներից մէկն է, ասում է ի միջի այլոց հեղինակը, ժողովրդին իրաւագիտական օգնութիւն կազմակերպելու անհրաժեշտութիւնը. վերջին ժամանակ այդ խնդիրը շատ անգամ արծարծվել է թէ պարբերական մամուլի և թէ իրաւագիտական ընկերութիւնների և այլ հաստատութիւնների մէջ. շնորհիւ փաստաբանների նոր սերնդի ջերմեռանդ գործունէութեան՝ այդ կարևոր գործը մի քանի տեղերում որոշ կազմակերպութիւն ստացաւ և դատարանական հիմնարկութիւններին կից հիմնվեցին խորհրդակցական բիւրօներ դատարանական գործերում ժողովրդին ձրի կամ մատչելի պայմաններով օգնութիւն մատակարարելու համար։

Բայց կան այնպիսի տեղեր, ինչպէս ընդարձակ կովկասեան երկրի հեռաւոր գաւառներում, ուր այդպիսի հաստատութիւնների և փաստաբանների չը լինելու պատճառով՝ տեղական բազմաբեղուռ ժողովուրդը անօգնական վիճակի մէջ է գտնվում, որն անշուշտ շատ կը թեթևանար, եթէ իրաւագիտութեան տարրական գիտելիքը տարածված լինէր ժողովրդի ստուար խաւերում։

Ահա այդ կարիքը լրացնելու համար և աչքի առաջ ունենալով, որ մենք չունենք դատավարութեան յատկացրած հանրամատչելի հրատարակութիւններ, երդ. հաւատ. Սոկրատէս Մելիք-Ադամեան կազմել է իր գիրքը, իբրև մի գործնական ձեռնարկ, որի միջոցով իւրաքանչիւր գրագէտ, քիչ թէ շատ տեղեակ ռուս լեզուին, կարող է դատարան դիմելու դէպքում ինքը կազմել այս կամ այն խնդիրը առանց փաստաբանի օգնութեան դիմելու, որը, ինչպէս առաջ յիշեցինք, մեր երկրի շատ տեղերում նոյն իսկ բացակայում է։

Գիրքը կազմված է մեծ խնամքով և պարունակում է իր մէջ դատավարութեան բազմազան թղթերի նմուշներ հաշտարար դատաւորի, նահանգական դատարանի և պալատի իրաւասութեան ենթակայ գործերի համար. իւրաքանչիւր նմուշի տակ զետեղված է նրան յատուկ ծանօթութիւնը պատշաճաւոր օրէնքների յօդուածներով և Կառավարչական Սենատի բացատրութիւններով հանդերձ. այդ ձեռնարկի գործածութիւնը հեշտացնում է գրքին կցած ցանկը, որի միջոցով դիւրին է գտնել այս կամ այն խնդրի օրինակը իր փաստական կողմերով և նրանով ղեկավարվել դատարան դիմելիս։

Ի նկատի առնելով գրքի վերոյիշեալ արժանաւորութիւնները, պէտք է յուսալ, որ նա, իբրև տարրական, հանրամատչելի ձեռնարկ դատարանական գործերի համար, լաւ ընդունելութիւն կը գտնէ ժողովրդի մէջ, որի ա՛ռօրեայ պէտքերի համար հրատարակված է։

Ց. Ս.

«ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ»

—

«Մշակի» մէջ արդէն հաղորդված էր, որ Վենետիկի Մխիթարեան տպարանում սկսել է այս վերնագիրն ունեցող մի նոր հրատարակութեան տպագրութիւնը։

Մենք ստացանք այդ հրատարակութեան առաջին թերթը, որ բաւականաչափ նիւթ է տալիս հակացողութիւն կազմելու ամբողջ գործի մասին։ Մեր ստացած տպաւորութիւնը հաղորդում ենք ընթերցող հասարակութեան։

Հանգուցեալ Հ. Գարեգին վ. Զարբհանալեանը Վենետիկի Մխիթարեանների մէջ ունէր իր առանձին մատենագիտութիւնը։ Նա զբաղված էր գրականութիւնների (թէ հայոց և թէ եւրոպական) պատմութեամբ և ունի մի շարք աշխատութիւններ, որոնցից մի քանիսը, օրինակ, հայոց հին գրականութեան պատմութիւնը, չունեն իրանց նմանը մեզանում։ Գրականութիւնների պատմութիւնը բաւական չը համարելով իր ընդարձակ տեղեկութիւնները ընթերցող հասարակութեան հաղորդելու համար, Հ. Զարբհանալեան 1883 թ-ին հրատարակեց «Հայկական Մատենագրութիւն» անունով աշխատութիւնը։ Դա մանր տառերով տպած մի ութծալ հատոր է, 734 երեսից բաղկացած և այժմս սպառված մի հրատարակութիւն է։ Իսկ թէ ինչ է նրա բովանդակութիւնը,—այդ արտայայտել է ինքը, հեղինակը, առաջին երեսի վրա տպած այս խօսքերով. «Այրուբենական ցուցակ տպագրութեան գիւտէն մինչև առ մեզ եղած հայերէն հրատարակութեանց»։ 371 տարի էր անցել հայերէն տպագրութեան սկզբից մինչև 1883 թ-ականը։ Հ. Զարբհանալեանի ծրագիրն էր այդ ժամանակամիջոցում տպված բոլոր հայերէն գրքերի ցուցակը տալ։

Գործի դժուարութիւնը ինքն ըստ ինքեան հասկանալի էր։ Պէտք էր ունենալ մի այնպիսի գրադարան, որի մէջ հաւաքված լինէին բոլոր հայերէն գրքերը։ Այդպիսի գրադարան այն ժամանակ չունէին Մխիթարեանները. բայց և այդպէս, եղած գրադարանն էլ այնքան հարուստ էր, որ Զարբհանալեանի այդ գործը բաւական հարուստ մի ցուցակ էր։

Բայց ով գործ է ունեցել այդ ցուցակի հետ, նա գիտէ, թէ որքան պակասութիւններ կան նրա մէջ, պակասութիւններ, որոնք ոչ միայն տեղեկութիւնների աղքատութիւնից էին առաջանում, այլ և դասաւորութեան, սիստեմի անկատարութիւնից։ Վաղուց զգացվում էր այդ ցուցակը նորից մշակելու, լրացնելու անհրաժեշտութիւնը։ Եւ այդ գործը իր վրա վերցրեց Հ. Արսէն Ղազիկեան։

Նա բոլորովին այլ սիստեմ է մշակել. նրա «Նոր Մատենագիտութիւնը» ունի այնպիսի հարստութիւններ, որոնց մասին Զարբհանալեանի ցուցակը հասկացողութիւն անգամ չունէր։ Օրինակ, բաց ենք անում «Աբովեան»։ Այս անունը գրաւում է ամբողջ երեք մեծ, մանրատառ սիւնակ, որովհետև բերված են ոչ միայն Խաչատուր Աբովեանի գրուածքները, այլ և այն ամբողջ գրականութիւնը, որ վերաբերվում է Աբովեանին. այդտեղ դուք կը տեսնէք և՛ քննադատութիւններ, և՛ կենսագրութիւններ, և՛ առանձին ուսումնասիրութիւններ։ Այնպէս որ հետաքրքրվողը կարող է գտնել հարուստ, բազմակողմանի ցուցմունքներ՝ Աբովեանին ուսումնասիրելու համար։

Հ. Ղազիկեան գնում է ոչ միայն գրքի անունը, այլ և առանձին առանձին յիշատակում է գրքի իւրաքանչիւր նոր տպագրութիւնը ու նրա հաղորդած տեղեկութիւնները հասնում են մինչև ներկայ օրերը։ Տալ ամեն մի գրքի մասին, որքան կարելի է, բազմակողմանի տեղեկութիւններ—ահա ինչն է Հ. Ղազիկեանի նպատակը։ Ո՞րքան մեծ աշխատանք պէտք է թափել այդպիսի մի նպատակ իրագործելու համար։ Հ. Ղազիկեան նոյն իսկ չէ բաւականացել առանձին տպված գրքերով. նա գնում է և այն աչքի ընկնող աշխատութիւնները, որոնք տպագրված են միայն պարբերական հրատարակութիւնների մէջ։ Հ. Զարբհանալեանը այսպիսի աշխատութիւնների հետ գործ չէ ունեցել. այժմ «Նոր Մատենագիտութիւնը» երկպատիկ պիտի ստուարանայ, եթէ կատարէ և այդ գործը։

Մենք միայն 16 երես ունենք մեր առջև և դեռ չենք կարող ասել, թէ որքան ճիշդ ու կատարեալ է «Նոր Մատենագիտութիւնը» իր բազմակողմանի, հարուստ ծրագրի բոլոր մանրամասնութիւնների մէջ։ Բայց չենք կարող այժմից իսկ չասել, որ այդ գործը մի հոյակապ ձեռնարկութեան տպաւորութիւն է թողնում մեզ վրա։ Նրա դիրքը մեծ է, իւրաքանչիւր երես բաղկացած է երկու սիւնակից, տառերը փոքր են, տպագրութիւնը մաքուր։

Ցանկանում ենք Հ. Ղազիկեանին աջողութիւն իր այդ ծանր գործի մէջ։ «Նոր Մատենագիտութիւնը», որքան էլ զերծ չը լինի պակասութիւններից, մի գեղեցիկ ապագայ պիտի դառնայ, որ Վենետիկի այժմեան Մխիթարեանները գիտեն աշխատել իրանց նշանաւոր նախնիքների նման։

Լ.

ՆԱՄԱԿ ՍՏԱՒՐՈՊՈԼԻՑ

—

Մարտի 20-ին

Մենք հաղորդել էինք, թէ դերասան Ստեփանեան պատրաստվում է այստեղ «Ասլանբէյասի» պիէսը ներկայացնելու։ Տեղական հայ թատերասէրների բուռն մասնակցութեամբ գոյութիւն ունեցող մի քանի մանր-մունր արգելքները հարթվեցին, և ներկայացումը տեղի ունեցաւ մարտի 7-ին, հայոց ուսումնարանի դահլիճում։

Ներկայացումը ընդհանրապէս աջող անցաւ։ Բացի պ. Ստեփանեանից, որը Ասլանի դերը մեծ ոգևորութեամբ կատարեց և՝ շատ քիչ բացառութեամբ՝ անպայման լաւ էր մինչև վերջը,—բաւական և լաւ կատարեցին իրանց դերերը օր. Ս. Աղանասեան և պ. պ. Գուլաբեան, Եարալեան, Սագինեան, Մահտեսեան, Տէր-Սիմոնեան, Մանուկեան, Սողոմոնեան, Գասպարեան, Տէր-Գասպարեան, Նազարեան, Աղանասեան՝ չը նայած որ մի քանիսը մայրենի լեզուին լաւ չեն տիրապետում և առաջին անգամն էին բեմ դուրս գալիս։

Ի դէպ. հարկաւոր ենք համարում մի թիւրիմացութիւն պարզել։ Այստեղի և շատ ուրիշ տեղերի հայերը թիւր գաղափար ունեն թատրոնական ներկայացումների նշանակութեան և դերասանի կոչման մասին։ Շատերը այստեղի հայ գաղութի անդամներից չէին ուզում տոմսակ գնել, առարկելով, թէ ներկայացումը բարեգործական նպատակով չէ, այլ մասնաւոր անձի, դերասանի օգտին է... Առաջինը՝ թատրոնի գլխաւոր նպատակը բարեգործութիւնը չէ, այլ ժողովրդական շահը, գաղափարը, զգացմունքների կրթութիւնը, ճաշակի զարգացումը, էսթէթիկական զուարճութիւնը։ Երկրորդ, բաց ենք անում «Աբովեան»։ Այս անունը գրաւում է ամբողջ երեք մեծ, մանրատառ սիւնակ, որովհետև բերված են ոչ միայն Խաչատուր Աբովեանի գրուածքները, այլ և այն ամբողջ գրականութիւնը, որ վերաբերվում է Աբովեանին. այդտեղ դուք կը տեսնէք և՛ քննադատութիւններ, և՛ կենսագրութիւններ, և՛ առանձին ուսումնասիրութիւններ։ Այնպէս որ հետաքրքրվողը կարող է գտնել հարուստ, բազմակողմանի ցուցմունքներ՝ Աբովեանին ուսումնասիրելու համար։

Հ. Ղազիկեան գնում է ոչ միայն գրքի անունը, այլ և առանձին առանձին յիշատակում է գրքի իւրաքանչիւր նոր տպագրութիւնը ու նրա հաղորդած տեղեկութիւնները հասնում են մինչև ներկայ օրերը։ Տալ ամեն մի գրքի մասին, որքան կարելի է, բազմակողմանի տեղեկութիւններ—ահա ինչն է Հ. Ղազիկեանի նպատակը։ Ո՞րքան մեծ աշխատանք պէտք է թափել այդպիսի մի նպատակ իրագործելու համար։ Հ. Ղազիկեան նոյն իսկ չէ բաւականացել առանձին տպված գրքերով. նա գնում է և այն աչքի ընկնող աշխատութիւնները, որոնք տպագրված են միայն պարբերական հրատարակութիւնների մէջ։ Հ. Զարբհանալեանը այսպիսի աշխատութիւնների հետ գործ չէ ունեցել. այժմ «Նոր Մատենագիտութիւնը» երկպատիկ պիտի ստուարանայ, եթէ կատարէ և այդ գործը։

Մենք միայն 16 երես ունենք մեր առջև և դեռ չենք կարող ասել, թէ որքան ճիշդ ու կատարեալ է «Նոր Մատենագիտութիւնը» իր բազմակողմանի, հարուստ ծրագրի բոլոր մանրամասնութիւնների մէջ։ Բայց չենք կարող այժմից իսկ չասել, որ այդ գործը մի հոյակապ ձեռնարկութեան տպաւորութիւն է թողնում մեզ վրա։ Նրա դիրքը մեծ է, իւրաքանչիւր երես բաղկացած է երկու սիւնակից, տառերը փոքր են, տպագրութիւնը մաքուր։

Ցանկանում ենք Հ. Ղազիկեանին աջողութիւն իր այդ ծանր գործի մէջ։ «Նոր Մատենագիտութիւնը», որքան էլ զերծ չը լինի պակասութիւններից, մի գեղեցիկ ապագայ պիտի դառնայ, որ Վենետիկի այժմեան Մխիթարեանները գիտեն աշխատել իրանց նշանաւոր նախնիքների նման։

Լ.

ՆԱՄԱԿ ՍՏԱՒՐՈՊՈԼԻՑ

—

Մարտի 20-ին

Մենք հաղորդել էինք, թէ դերասան Ստեփանեան պատրաստվում է այստեղ «Ասլանբէյասի» պիէսը ներկայացնելու։ Տեղական հայ թատերասէրների բուռն մասնակցութեամբ գոյութիւն ունեցող մի քանի մանր-մունր արգելքները հարթվեցին, և ներկայացումը տեղի ունեցաւ մարտի 7-ին, հայոց ուսումնարանի դահլիճում։

Ներկայացումը ընդհանրապէս աջող անցաւ։ Բացի պ. Ստեփանեանից, որը Ասլանի դերը մեծ ոգևորութեամբ կատարեց և՝ շատ քիչ բացառութեամբ՝ անպայման լաւ էր մինչև վերջը,—բաւական և լաւ կատարեցին իրանց դերերը օր. Ս. Աղանասեան և պ. պ. Գուլաբեան, Եարալեան, Սագինեան, Մահտեսեան, Տէր-Սիմոնեան, Մանուկեան, Սողոմոնեան, Գասպարեան, Տէր-Գասպարեան, Նազարեան, Աղանասեան՝ չը նայած որ մի քանիսը մայրենի լեզուին լաւ չեն տիրապետում և առաջին անգամն էին բեմ դուրս գալիս։

Ի դէպ. հարկաւոր ենք համարում մի թիւրիմացութիւն պարզել։ Այստեղի և շատ ուրիշ տեղերի հայերը թիւր գաղափար ունեն թատրոնական ներկայացումների նշանակութեան և դերասանի կոչման մասին։ Շատերը այստեղի հայ գաղութի անդամներից չէին ուզում տոմսակ գնել, առարկելով, թէ ներկայացումը բարեգործական նպատակով չէ, այլ մասնաւոր անձի, դերասանի օգտին է... Առաջինը՝ թատրոնի գլխաւոր նպատակը բարեգործութիւնը չէ, այլ ժողովրդական շահը, գաղափարը, զգացմունքների կրթութիւնը, ճաշակի զարգացումը, էսթէթիկական զուարճութիւնը։ Երկ-

բորդ՝ դերասանը լոկ մասնաւոր անձնաւորութիւն չէ, այլ վսեմ կոչում ունեցող մի անհրաժեշտ հասարակական գործիչ, որին մենք պարտական ենք հնարաւորութիւն տալու, որ մարդավայել կերպով ապրէ ֆիզիկապէս ու բարոյապէս և գործէ ժողովրդի, հասարակութեան օգտին, մեր կոշտ ու խոպան զգացմունքները փափկացնէ, բիրտ ճաշակը կրթէ, բայց մանաւանդ մարդկային սրտի նուիրական, սակայն քնքոյշ զգացմունքները շարժէ, զարթեցնէ... Թող ներվի մեզ, որ մենք ստիպված ենք կրկնելու այս այբուբենը, որը երբէք աւելորդ չենք համարում...

Վերև յիշած զարմանալի կարծիքը համարեա տիրապետում է այստեղի հայերի մէջ և ինչպէս երևում է, միայն հայ դերասանների նկատմամբ, որովհետև շատերը մերոնցից՝ մերժելով մեր դերասանի ներկայացմանը տոմսակ վերցնել՝ առարկելով, թէ բարեգործական նպատակով չէ, շտապում էին ամեն օր տեղի ունեցող՝ մալաքօսների ներկայացումներին, որ ի հարկէ, նոյնպէս բարեգործական նպատակով չէն։ Այս լոգիկայի շնորհիւ՝ վայ կը լինէր մեր դերասանին, եթէ մի քանի մասնաւոր անհատներ չօգնէին տոմսակները տարածելու։ Այդ տեսակէտից, մանաւանդ, դերասանին մեծ ծառայութիւն արեց այստեղ գտնվող նրա մի հայրենակիցը, Անպէտքեան ազգանունով, որը, սակայն ընդհանրապէս շատ պէտքական մարդ է երևում։ Գլխաւորապէս պ. Անպէտքեանի շնորհիւ բաւական մեծ դահլիճը ծայրէծայր լցվեց հայ հասարակութեամբ, որով պ. Ստեփանեանի և տեղական թատերասէրների աշխատանքը զուր չանցաւ։ Մանաւանդ ուրախալի է, որ հանդիսականներն ու պ. Ստեփանեան վերջ ի վերջոյ շատ գոհ մնացին իրարից։ Ցանկալի է, որ չը մոռանան իրար և պ. Ստեփանեան կրկին այցելէ Ստաւրօպոլ։

Ներկայացումից յետոյ՝ պարեր տեղի ունեցան, որովհետև այստեղի ոչ միայն կանայք, այլ ազամարդիկ էլ պար են ուզում... Ցանկալի է, որ պարերը չը կապվեն լուրջ գործի հետ և չը ծառայեն, իբրև խայծ, որով ձկին գրաւում և բռնում են։ Ո՛չ թէ պարերով հրապուրված պէտք է գնալ թատրոն և այլ կրթական վայրեր, այլ գիտակցութեամբ առաջնորդված։ Ուրեմն թողէք ձեր այդ անմիտ պարերը...

Որովհետև այստեղի հայ համայնքի մէջ խուլ դժգոհութիւն կար երէցփոխ պ. Ենիկալոպեանից, այս վերջինս հրաժարվել էր, և Աստրախանի կօնսիստորիան նոր երէցփոխի ընտրութիւն էր նշանակել։ Գաղտնի քուէարկութեամբ համարեա միաձայն երէցփոխ էր ընտրվել վաճառական պ. Կ. Դեաչկեանը, որը այս կողմերում յայտնի է իր բարի գործերով։ Նորերս սրբազան առաջնորդը պ. Դեաչկեանին հաստատեց երէցփոխի պաշտօնում։ Նոր երէցփոխը շուտով հնից կը ստանայ հաշիւները և կը ստանձնէ իր պաշտօնը։ Յուսով ենք, որ նոր երէցփոխի օրով եկեղեցին աւելի բարեկարգ դրութեան մէջ կը լինի, և երկու սեռի քառաձայն երգեցիկ խմբի գոյութիւնը հաստատ հիմքերի վրա կը դրվի, գլխաւորապէս, ի հարկէ, նիւթական տեսակէտից։ Առայժմ խմբապետ է հրաւիրված Պետերբուրգի կօնսերվատօրիայի ուսանող պ. Եղ. Բաղդասարեանը, որ Այվազովսկու յիշատակին նուիրված գեղարուեստական ալբոմի խմբագրող ու հրատարակողներից մէկն է։ Պ. Բաղդասարեան արդէն եկաւ և ստանձնեց իր պաշտօնը։ Ցանկանում ենք կատարեալ աջողութիւն։

Սալլիմեան

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Մարտի 7-ին

Ժողովրդական մի առած կայ, որը ասում է թէ՝ «մարդ իր խելքի ճոթիցն է կրակն ընկնում»։ Այս առածին աւելի շատ ենթարկվում են մեր գիւղացիք։ Ով ապրել է գիւղում և լաւ ուսումնասիրել է գիւղացու նիստ ու կացը, համոզմունքները, սովորութիւնները, նա անշուշտ նկատած կը լինի, թէ որքան նեղութիւնների, դժուարութիւնների ու անբաղդութիւնների են ենթարկվում գիւղացիք իրանց մէջ արմատացած փտած սովորութիւնների շնորհիւ։ Այդ սովորութիւններից իրանց վատ և ցաւալի հետևանքներով աչքի են ընկնում երկուսը, առաջինը «բէշիկբարթման» է, որի հետևանքների մասին մենք մի քանի խօսքով արդէն յիշեցրել ենք «Մշակում», իսկ միւսը աղջիկ փախցնելն է. ահա այդ վերջինիս մասին ուզում ենք մի քանի խօսք ասել։

Աղջիկ փախցնելը առհասարակ առաջանում է հետևեալ պայմաններից. ինչպէս յայտնի է, գիւղերում թէ աղջկայ և թէ տղայի ընտրութիւնը վերապահված է ծնողներին. աղջիկը իրաւունք չունի իր համար փեսացու ընտրելու, դա մեծերի գործն է. տղան էլ, շատ քիչ բացառութեամբ, համարեա թէ նոյն դրութեան մէջ է։ Տղայի կողմից խնամախօսները գնում, աղջկայ ծնողների համաձայնութիւնը առնում, «բաշլղի» գումարը որոշում և աչքալոյսի «տարը» խմելուց յետոյ արդէն խնամի են. իսկ ոչ աղջիկն է տեսել—ճանաչում տղային, և ոչ տղան—աղջկան։

Պատահում է, որ նախ քան այդ բոլորի կատարվելը, աղջիկը «աչք է քցած» (սիրահարված) լինում մի ուրիշ երիտասարդի վրա, և բնական է, որ այդ նորեկը նրան զզվելի պէտք է երևայ. բայց նա իրաւունք չունի բողոքելու դրա դէմ ծնողներին, նրա անունը կը խայտառակվի, նրան ուրիշ աչքով կը նայեն, և աղջիկը ստիպված է լինում ժամանակաւորապէս խեղդել իր մէջ իրան տանջող այդ զգացմունքը։ Եւ ահա մի գեղեցիկ օր վեր է կենում իր սիրած տղայի հետ և փախչում հօր տանից. այդ դէպքում շատ քչերին է աջողվում պսակվել փախած տղայի հետ և ապրել որպէս ամուսիններ. այդպիսիներից մեծ մասը կորցնում են նոյն իսկ իրանց բարոյականութիւնը, մանաւանդ երբ փախչում են պսակվելուց յետոյ։

Պատահում են բացառիկ դէպքեր էլ, երբ մէկ երիտասարդ սիրահարված է լինում մի աղջկայ վրա, առանց վերջինից փոխադարձը ստանալու, և երբ դիմում է աղջկայ ծնողներին և մերժում ստանում, այն ժամանակ վրեժուում է «զօռով» փախցնել, իսկ այդպիսի դէպքերը շատ տխրալի վախճան են ունենում, և շատ անգամ սպանութիւնների տեղիք են տալիս։ Նոյն իսկ պատահում է, որ մի աղջկայ համար երկու հարևան գիւղերը թշնամանում են միմեանց հետ, և անագին գժտութիւններ են ծագում մէջտեղը։

Այդպիսի գիւղերից ամենից շատ աչքի է ընկնում «Վերի-Ղալնիճա» գիւղը, որ գտնվում է Ալէքսանդրօպօլից եօթը վերստ հեռաւորութեան վրա և որտեղ շատ շուտ շուտ է պատահում աղջիկ փախցնելը։ Այս երևոյթը ունի իր պատճառները։ Յիշեալ գիւղում բուն են դրել երկու «առող» ընտանիք, որ մեծ չարիք են դարձել ընդհանրապէս գիւղացիների և մանաւորապէս աղջիկների գլխին։

Մենք կը բերենք այստեղ այդ մարդկանց մեր անձամբ ստուգած մի քանի քաջագործութիւնները։ Լինելով մեծ ընտանիք և յանդուգն իրանց քայլերի մէջ, այդ մարդիկ ընդհանուր երկիւղ են գցել գիւղում. եթէ մէկը ուզում է նշանվել կամ տեղացի կամ մի ուրիշ տղայի հետ, նա պարտաւոր է համաձայնութիւն ստանալ վերոյիշեալներից. իսկ վերջիններս, երբ տեսնում են, որ աղջիկ ուզողը իրանցից զօրեղ մարդ է, համաձայնութիւն տալիս են, իսկ եթէ ոչ, այն ժամանակ տղայի տիրոջից պահանջում են մի որոշ գումար, որպէս զի թոյլ տան աղջիկը տանելու։ Եւ այդպէս էլ անում են. կամ փող են առնում տղայից և թոյլ տալիս հարսնացուն տանելու, կամ չեն թողնում մօտենալու ու գիւղ մտնելու, որի հետևանքն են լինում կռիւ և խռովութիւններ։

Պատահում է, որ մէկը աչք է ունենում մի աղջկայ վրա, և երբ վերջինիս ծնողներից մերժում է ստանում, այն ժամանակ դիմում է յիշեալ հերոսներին, որոնք մի կլոր գումար ստանալով նրանից, փախցնում են աղջկան և յանձնում տղային։ Մօտիկ անցեալներում «Սարօենց-Գալօի» տղաները 100 բուբլի առնելով մէկից, գիշերով մտնում են իրանց քրոջ տունը և վերջինիս միակ նշանված աղջկանը քնած տեղից անկողնով վերցնում և տանում են։ Այդ տղաներից մէկը փախցնում է մի ուրիշ նշանված աղջկայ և երեք ամիս պահելուց յետոյ, ինքը գինւոր է ընկնում, իսկ դժբաղդ աղջկան նորից վերադարձնում է իր հօրը։ Նոյնատեսակ դէպքեր այդ գիւղում մինչև այժմս էլ շարունակվում են։

Ա. Տէր-Առաքելեանց

ՆՈՐՈՒԹԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս արդէն հաղորդել էինք, Խարկովում մատդրութիւն կայ բաց անել կանանց բարձրագոյն կուրսեր։ Այժմ «Нижег. Лис.» լրագիրը հաղորդում է, որ այդ կուրսերի համար արդէն 5,000 ր. դրամագլուխ հաւաքված է և նախապատրաստական ժողովներին մասնակցող պրոֆեսօրների մեծ մասը պատրաստակամութիւն են յայտնել ձրի դասախօսել ապագայ կուրսերում։

—

Հացահատիկների արտահանութեան ժամանակ յաճախ պատահում են կեղտոտ դէպքեր. արտահանվող հատիկների հետ խառնում են հող, աւազ և այլ տեսակ ծանրացնող ու անպէտք, նոյն իսկ վնասակար նիւթեր։ Այդ առևտրական սխրագործութիւնների առաջն առնելու համար քրէական դատավարութեան նոր ծրագրի մէջ մտցված են բաւական խիստ պատիժներ հացահատիկների հետ նպատակով զանազան նիւթեր խառնելու դէպքերի առիթով։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգում պօստի նոր կառավարիչ Զապլինի ձեռներէցութեամբ այժմ մշակվում է բաց նամակների մի նոր ձև։ Նոր բաց-նամակների տարբերութիւնը հներից նրանումն է, որ թոյլատրվում է գրել և մինչև այժմ միայն հասցէի համար վերապահված երեսի վրա էլ։ Դրա համար ուզում են ներմուծել Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և Բելգիայում արդէն մշակված բաց-նամակների մի նոր ձև։ Այդ փոփոխութեան դրդիչ պատճառը նա է, որ ներկայումս ամբողջ աշխարհում սաստիկ տարածվել են պատկերաւոր բաց նամակներ, որոնց մի երեսի վրա ոչինչ չէ կարելի գրել, իսկ միւս երեսը նշանակված է միայն հասցէի համար. կը նշանակէ գրելու տեղ բոլորովին չէ մնում։

—

Մինիստրների խորհրդի մարտի 4-ի Բարձրագոյն հաստատված վճռով Գեօրիս աւանը, որ Զանգեզուրի գաւառի վարչական կենտրոնն է, վերափոխված է գաւառական քաղաքի, նոյն անունով—այն պայմանով, որ քաղաքի գծի մէջ եղած բոլոր հողերը մնան այն անձերի և հաստատութիւնների ձեռքին, ուր գտնվում էին առաջ օրինական կարգով, և որ Գեօրիսում եղած բոլոր գիւղական դասակարգին պատկանող անձերը, եթէ չուզենան գրվել քաղաքացի, օգտվեն իրանց բոլոր նախկին իրաւունքներով։ Դրա հետ միասին ներքին գործերի մինիստրին թոյլատրված է կարգադրել ներմուծել այդ նոր քաղաքը կըրճատված քաղաքային ինքնավարութիւն, համաձայն այդ առիթով գոյութիւն ունեցող կանոնադրութեան 22-րդ յօդուածի, և քաղաքի կալուածների գնահատութիւն անել, որպէս զի որոշվի կալուածատէրերի մասնակցութեան իրաւունքն առաջին ժողովին։ Գնահատութիւնը լինելու է քաղաքի սեփականատէրերից ընտրված առանձին յանձնաժողովի ձեռքով, որի նախագահը լինելու է Գանձակի նահանգապետի կողմից նշանակված անձը։

—

«Русь» լրագրին հաղորդում են Պետիգօրսկից, որ մարտի 7-ին այնտեղ է եկել Ջրերի ընդհանուր տեսուչը, իսկ նրանից յետոյ՝ մարտի 11-ին հասել է և պետական յանձնաժողովը, որ պէտք է մանրամասն վերաքննութեան ենթարկէ Կովկասեան հանքային Ջրերի վարչութիւնը Խվոշչինսկու տեսչութեան վերջին երեք տարիների ընթացքում։ Յանձնաժողովը եկել է ոչ թէ միայն թուական փաստերը քննելու, այլ մանրազնին էական քննութեան ենթարկելու շէնքերը, կապալները, մատակարարութիւնները և Նարզանի ու միւս Ջրերի արտահանութիւնը, ձեռնարկութիւններ, որոնց վրա մեծամեծ գումարներ են ծախսված։ Մանրամասն վճռի ու քննութեան պէտք է ենթարկվեն 52 հարցեր, որ արդէն առաջարկված են յանձնաժողովին։ Ամենից առաջ յանձնաժողովը պահանջել է Նարզանի և ուրիշ Ջրերի արտահանութեան «գործը» Եւանգուլովի ձեռքով, յետոյ հերթով՝ Լէյզերովիչի գործը—Պեատիգօրսկի պետական «Միխայլովա» հիւրանոցի կապալը, Կօգանի և Իօֆֆէի գործը—Կիսլովոդսկում վաննաների շէնքի կառուցումը, էլէքտրական քարշակի կապալառու Ֆրիդմանի և ուրիշների գործերը։ Յանձնաժողովը Պեատիգօրսկում կը մնայ մի ամսից աւելի։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ստացել է «Ընդհանուր կօնտինենտալ ընկերութիւնից» մի նամակ, որով վերջինս առաջարկում է քաղաքին հիմնել գազի գործարան քաղաքում։

—

«Прав. Вѣст.»-ում հրատարակված է 1904 թուականի համար նշանակված ծախքերի կըրճատման Բարձրագոյն հրամանը, որ տեղի է ունեցել Հեռաւոր Արևելքի ներկայ դէպքերի պատճառով։ Կրճատման ընդհանուր չափն է 134,377,106 բուբլի, որը և մտնում է պետական գանձարանը իբր ազատ գումար։ Այդ հաշուի մէջ կան մասեր, որ վերաբերում են Կովկասի ծախքերին։ Կրճատման ամենամեծ մասը վերաբերում է հաղորդակցութեան ճանապարհներին։ Դրանք են. 1) Սեւծովեան նահանգի լեռնային ճանապարհների սովորական ծախքից կրճատված է 100,000 ր., 2) Բաթումից-Արդահանի, ավարօ-կախէթեան խճուղիների և Անդրկովկասի ճանապարհների ծախքերից—250,000 ր., Նովօրոսսիյսկի խճուղու ծախքից էլ 100,000 բուբլի։ Այդքանը սովորական տարեկան ծախքերից. իսկ արտակարգ ծախքերից կրճատված են—3) Երևանից մինչև Պարսկաստան շինվող երկաթուղուց—2,000,000 ր., 4) Թիֆլիս-Կարսի գծի 1902 թուի արտակարգ ծախքից—450,000 ր.։ Լուսաւորութեան մինիստրութեան ծախքերից կրճատված են. 5) Պետերբուրգի գիմնազիայի մանկավարժական մարմնի և 6) Ստաւրօպոլի ստորին արհեստաւորաց դպրոցի ծախքերից։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը վճռել է կապալառուներին ստիպել մասնակցելու թոքախտով հիւանդացած բանուորներին ամբուլատորիաներում և հիւանդանոցներում բժշկելու գործին։

—

«Кавказъ» պաշտօնական լրագիրը հաղորդում է, որ պօստ-հեռագրատների գլխաւոր վարչութիւնը տեղեկացրել է Թիֆլիսի պօստ-հեռագրական շրջանի գլխաւորին, թէ ներքին գործերի մինիստրութիւնը իրաւաբանութեան կանդիդատ Ֆէօդորովին տուել է Գանձակում հեռագրական (? թէ հեռախօսական) ցանց անցկացնելու կօնցեսսիան։ Կօնցեսսիայի մանրամասն պայմանները պէտք է մշակվեն Թիֆլիսում։

—

Պետերբուրգի քաղաքային վարչութիւնը, Վիէննայի օրինակով, սկսեց մօտ օրերս նոր տեսակի լուսաւորութեան փորձ անել. քաղաքային սպանդանոցի անասնական մնացորդներից լուսաւորող գազեր պատրաստել և դրանով քաղաքը լուսաւորել։ Վիէննայի արած փորձը լիակատար աջողութիւն է ունեցել, իսկ Պետերբուրգինն անաջող անցաւ, որովհետև գազեր պատրաստող մեքենան շուտով փըչացաւ և լոյսը դադարեց։

—

Թիֆլիսի նահանգապետը յայտնել է քաղաքի մեշչանների աւագին, որ նա համաձայն իր խնդրի, արձակվում է իր պաշտօնից, և պարտաւորվում է մեշչանների վարչութեան բոլոր գործերը յանձնել այդ պաշտօնի թեկնածու պ. Դանդուրեանին, որին հրամանագրված է մտնել մեշչանների աւագի պաշտօնի մէջ։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը ներկայումս վճռել է բաց անել յատուկ մասնագիտական դպրոցներ ներքին նաւային հաղորդակցութեան համար ծառայողներ պատրաստելու նպատակով։ Ծրագրված են երկու կարգ դպրոցներ։ Առաջին կարգի դպրոցների ծրագիրը և առարկաները յարմարեցված պէտք է լինեն մեծ նաւերի նաւապետ լինելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներին, իսկ երկրորդ կարգի դպրոցներինը՝—փոքր նաւերի ղեկավարների և նաւապետների պէտքերին յարմարեցված ծրագրով։

—

Մոսկվայի պատմական թանգարանի մէջ բաւական մեծ թուով իրեր են հաւաքվել Գօնչարով յայտնի գրողին վերաբերվող։ Այդ պատճառով միտք է յղացել թանգարանում բաց անել մի առանձին «Գօնչարովեան բաժին»։ Թանգարանի վարչութիւնը, լսելով որ Պետերբուրգում Ստասիւլեվիչի մօտ գտնվում է «Обрывъ» վէպի ձեռագիրը, վճռեց դիմել Ստասիւլեվիչին և խնդրել, որ այդ ձեռագիրը յանձնվի թանգարանի նոր բացվելիք բաժնին՝ պահպանութեան համար։

—

Գանձակի գաւառի Փիրֆ գիւղից մեզ գրում են. «Վերջին տարիներս մարդասպանութիւնները մեզանում յաճախ են կրկնվում։ Այս օրերս ճանապարհի բանուորներից երկուսի մէջ վէճ է բացվում և մէկը միւսին բէհբութի հարուածով մեռցնում է։ Մի քանի օր առաջ այդպիսի մի դէպք էլի եղած է, բայց վիրաւորը մի քանի շաբաթ տանջվելուց յետոյ, հաղիւ առողջանում է։ Մարդասպանը ձերբակալված է։»

—

ՁԱՐՁՈՒԻՑ մեզ գրում են. «Մարտի 21-ին տեղիս հայ երիտասարդները, երկու հայ զինուորի մասնակցութեամբ, տուեցին առաջին

անգամ «հայկական ժողովրդական ներկայացում»։ Բեմը բացվելուց երգվեցին խմբովին մի քանի երգեր, խաղացին «200,000» կատակերգությունը մեկ արարուածով և «Խեչօի թուզը» վոդեվիլ ի նպաստ ռուսաց նաւատորմի ուժեղացման Հեռաւոր Արևելքում։ Բոլոր դերակատարները աջողությամբ տարան իրանց դերերը։ Դահլիճը լիքն էր ժողովրդով. մուտքը բաւարար էր։»

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Ուրբաթ, մարտի 19-ին, երեկոյեան ժամը 8-ին, քաղաքիս հասարակական կլուբի դահլիճում կայացաւ նոյն ժողովարանի անդամների ընդհանուր ժողովը։ Ժողովին ներկայ էին կլուբի 74 անդամներից միայն 35 անձինք։ Ժողովը միաձայն ընտրեց մի քանի նոր անդամներ։ Ապա ժողովարանի կառավարիչ պ. Գ. Բուդուչանը կարդաց էլ և մուտքի հաշիւը, և այդ առիթով քննիչ յանձնաժողովի զեկուցումը։ Ժողովը լսելով այդ հաշիւը և զեկուցումը, միաձայն հաստատեց նրան։ Ժողովը նոյնպէս միաձայն և բուռն ոգևորությամբ ընդունեց և հաստատեց աւագների որոշումը—այն է 100 ր. յատկացնել ռուսաց նաւատորմի ուժեղացնելուն, 10 ր. ամսական Կարմիր Խաչի ընկերությանը և մի ներկայացումն էլ յօգուտ որբերի։ Այդ բոլորից յետոյ սկսվեցին նոր ընտրություններ։ Թերթիկներով առաջարկված մօտ 60 թեկնածուներից, ձայների բազմությամբ ընտրվեցին 15 աւագներ, 4 փոխանորդներ և երեքն էլ քննիչ յանձնաժողովի անդամներ։ Նոր ընտրված 15 աւագներից 11-ը նախկին աւագներն էին, միայն 4-ը նոր անձինք ընտրվեցին։ Հերթական հարցերը վերջանալուց յետոյ ժողովի նախագահը, դերբուատելով ժողովարանի կառավարիչ Գ. Բուդուչանի արդիւնաւէտ կառավարությունը, որը անընդհատ վարում է այդ պաշտօնը ամբողջ 12 տարի, առաջարկեց ժողովին հրապարակական շնորհակալություն յայտնել նրան այդ անխոնջ ծառայության համար։ Ժողովը միահամուռ յայտնեց իր շնորհակալությունը պ. Գ. Բուդուչանին։ Ի վերջոյ ժողովի նախագահի առաջարկությամբ ժողովականները շնորհակալություն յայտնեցին նոյնպէս աւագներին—իշխան Թումանեանցին, որը չը կամեցաւ կրկին վերընտրվել։ Իշխանը մեզ յայտնի է որպէս կլուբի թատրոնական սեկցիայի մէջ եռանդուն գործող»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋը

—

Եապօնացիների ոյժը։ Կօրէից ստացված տեղեկություններին նայելով, այժմեան ժամանակ ճանապարհին գտնվում են 260,000 եապօնացի զինուորներ, իսկ բերդերում պատրաստ կան 60,000 զինուորներ, չը հաշուելով 3-րորդ կարգի պահեստները, որոնք դեռ զէնքի չեն կանչված։ Ընդհանուր շտաբը լռություն է պահպանում արշաւանքի ծրագրի մասին, բայց ենթադրում են, որ եապօնական ռազմիկ ոյժերը երեք մասի կը բաժանվեն։ Եապօնական իշխանությունները հաւաքել են հազարաւոր ձիաներ, և իւրաքանչիւր բանակ պիտի ունենայ իր հետ հեծելազօրքի բաւական մեծ բաժիններ։ Հեծելազօրքի ոչ ձիաները և ոչ զինուորները, ըստ երևոյթին, չեն կարող հաւասարվել եւրոպական հեծելազօրքին, բայց եապօնական օֆիցէրները հաւատացնում են թէ իրանց հեծելազօրքը կոչման բարձրության վրա կանգնած կը լինի։ Կօրէա գնացող եապօնական թնդանօթաձիգ զօրքերը, ըստ երևոյթին, չեն տանում իրանց հետ ծանր թնդանօթներ, բայց ենթադրում են որ Եապօնիան ունի ծանր թնդանօթների շատ բատարէաներ, որոնք յետ չեն մնայ դաշտային թնդանօթներից. բացի դրանից Եապօնիան ունի լեռնային թնդանօթների շատ բատարէաներ։ (Росс. Аг.)

«Русск. Вѣд.» լրագրի Պէկինի թղթակիցը գրում է հետևեալը փետրվարի 27-ից. «Չինաստանը շարունակում է շտապով զինուորվել և ժողովել իր զօրքերը Մանջուրիայի սահմանի վրա։ Բոլոր աչքի ընկնող գեներալներն արդէն գնացին իրանց համար նշանակված տեղերը, մի և նոյն ժամանակ առանձին զօրաբաժինների հրամանատարները ճանապարհ ընկան երկաթուղիով, իսկ ամբողջ հիւսիսային (մանջուրական) չինական զօրքի գլխաւոր հրամանատար գեներալ Մաիւ-կունին պատահմամբ հանդիպեցին Մանջուրիա գնալիս ցամաքային ճանապարհով։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բանակցությունները Թիւրքիայի և Բոլգարիայի միջև առաջ չեն ընթանում, թէպէտև Բոլգարիան մեծ զիջումն արեց Բ. Դրան, համաձայնվելով չը պահանջել ըէֆորմների տարածումը Ադրիանօպոլի վիլայէտի վրա։ Բոլգարական քաղաքական շրջաններում մեծ դժգոհություն է տիրում, որովհետև Բ. Դրան հաճոյքի համար կառավարությունն արդէն մի քանի միջոցներ ձեռք առաւ մակեդոնական ապստամբների դէմ։ Բ. Դուռը միշտ նոր պահանջներ է անում, իսկ բոլգարական կառավարությունը հնարաւոր չէ համարում ընդունել այդ պահանջները։ Այդպիսով, դաշնագիրը, որը պէտք է կապվէր մէկ ու կէս ամիս առաջ, դեռ յետաձգվում է անորոշ ժամանակով։

—Եթէ նախագահ Լուբէի տեսակցությունը Պիոս X-ը պապի հետ չը կայանայ էլ, սակայն նախագահի իտալական ճանապարհորդությունը այնուամենայնիւ մի փոքր կը պարզէ այն տարաձայնությունները, որ ծագել են Վատիկանի և ֆրանսիական կառավարության միջև։ Ինչպէս հաղորդում է «Berliner Börsen Courier» լրագիրը, Հռոմում, երևի, կը կայանայ կարդինալ Մէրլի դէլ Վալի տեսակցությունը Դէլկասէի հետ, որի ժամանակ կը պարզվեն յարաբերությունները Ֆրանսիայի և պապական գահի միջև։

—«Berliner Tageblatt» լրագրին Կ. Պոլսից հաղորդում են հետևեալ տեղեկությունը Մօնաստիրում տիրող տրամադրության մասին. «Մօնաստիրի թիւրք ազգաբնակությունը ապստամբների սպառնալիքների և քաղաքական գործակալների անգործունէության պատճառով յուզման վիճակի մէջ է։ Եւրոպացիները վախենում են դուրս գալ իրանց տներից։ Վախենում են լուրջ անկարգություններից։

—Պարիզի «Matin» լրագիրը տպել է Լոնդոնի իր թղթակցի հեռագիրը այն մասին, որ, պալատական շրջաններից ստացված տեղեկությունների համեմատ, վերանորոգվել է Վիլհելմ կայսրի կոկորդի հիւանդությունը։ Նրա դրությունը իբր թէ շատ լուրջ է։ Այդ տեղեկությունը «Daily Mail» լրագիրը հաստատեց, իսկ անգլիական մեացած լրագիրներն արտատպեցին։ Բերլինից տեղի ունեցաւ հերքում։ Ի նկատի ունենալով այն, որ նա պաշտօնական բնաւորություն չէր կրում, անգլիական լրագիրները չը տպեցին այդ հերքումը, իսկ «Matin» լրագիրը շարունակում է պնդել, որ գերմանական կայսրը վտանգաւոր կերպով հիւանդ է։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 մարտի

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ։ Մարտի 25-ին։ (Սեփական թղթակցից)։ Պօրտ-Արթուրի շրջանում հանգիստ է։ Սպասվում է թշնամու յարձակումը, որը երևաց մեր ջրերում։

ՇԱՆԴՀԱՅ, մարտի 25-ին։ («Ռէյտ. գործ.»)։ Եապօնական զօրքը հասաւ Կօրէայում գանգան կէտերին Եալուի հարաւային ափի վրա։

ՍԷՈՒԼ։ («Ռէյտ. գործ.»)։ Հաղորդում են կօրէական աղբիւրից, որ ռուսները գրաւած ունեն 6 ամենամեծ սահմանագծային քաղաքներ Տումէնի վրա։

ՊՕՐՏ-ՍԱԻԴ։ («Ռէյտ. գործ.»)։ «Մէդօկ» շոգենաւը գնաց Սուդեան ծովածոցը, ուր «Վարեագ» կրէյսէրի հրամանատարը և նաւաստիները ափ կիջնեն։

ՊԱՐԻԶ։ Հաղորդում են Ֆրանս-բրիտանական համաձայնության մի քանի մանրամասնությունները։ Անգլիան յայտնեց, որ նա հրաժարվում է իր ազդեցությունից Մարօկկոի վրա, եթէ դրա փոխարէն Ֆրանսիան կը պարտաւորվի չամրացնել Տանժէրը և ծովափը Գիբրալտարի դիմաց։ Քաղաքական զիջումների մասին Եգիպտոսի վերաբերմամբ բանակցությունների ժամանակ չէր յիշվում։

ԼՕՆԴՕՆ։ («Ռէյտ. գործ.»)։ Մարտի 25-ին 50 հետևակներից բաղկացած անգլիական զօրաբաժինը, ձիերի վրա նստեցրած, Պետերսօնի հրամանատարությամբ, իմացաւ, որ 200 մարդուց բաղկացած տերէտեան զօրաբաժինը գրաւել է Սամնդու գիւղը։ Տիբէտցիները առաջարկեցին անգլիացիներին մօտենալ, իսկ յետոյ սկսեցին հրացանաձգություն նրանց վրա, վատ նշան դնելով, 120 քայլ հեռաւորության վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վօրոնէժեան նահանգի Վաուլիյսկից գաւառի 1-ին և 2-րդ ուրաղօվեան գիւղական համայնքների և Սմօլէնսկից գաւառի և նահանգի Եամսկայա Սլօբոդա գիւղի գիւղացիները միջնորդում էին, որ թոյլատրվի իրանց՝ նուիրել երկաթուղուն զիջած հողի համար իրանց ստացած վարձատրությունը, ընդամենը 5,300 ր. պատերազմական կարիքների համար։ Թագաւոր Կայսրը ներքին գործերի մինիստրի դրա մասին մատուցած ամենայատակ զեկուցման վրա Իր Սեփական ձեռքով բարեհաճեց գծագրել. «Շնորհակալ եմ նուիրատուության համար, բայց չեմ կարող համաձայնվել, որ ընդունվի դա։ Ժամանակակից հանգամանքները չեն պահանջում Ռուսաստանից զոհեր, որոնք բնաջնջեին ժողովրդական բարօրության արմատական հիմքերը»։

ԲԵՐԼԻՆ։ Լոնդոնի լրագիրների հաղորդած տեղեկության համեմատ, Ռուսաստանի և Անգլիայի միջև համաձայնություն է կայացել տիբէտեան արշաւանքի առիթով։ Լանսդոուն խոստացաւ, որ միսսիան չի մտնի Լխասա, եթէ նրան աջողվի աւելի շուտ համաձայնություն կայացնել սահմանների կանոնաւորման և բրիտանական առևտուրը դիւրացնելու վերաբերմամբ։ Իսկ եթէ անհրաժեշտությունը կը պահանջէ Լխասա մտնել, այնու ամենայնիւ դրա հետևանքը նրա գրաւումը չի լինի, ընդհակառակն, անգլիական պաշտօնատար անձինք անյապաղ կը հեռանան, հէնց որ կը կայանայ ցանկալի համաձայնությունը։ Ռուսաց կառավարությունը դրանով գոհացաւ։

Կ. ՊՕԼԻՍ։ Թիւրք-բոլգարական համաձայնությունը վերաքննված է, որովհետև նրա վերջին նախագծի խմբագրությունը երկու պետություններին ևս հաճարեա հաւասարազօր դրություն է տալիս և Բոլգարիայի աւատական յարաբերությունները բացի դրանից բաւականաչափ որոշված չեն։ Նոր նախագիծը քննվում էր մինիստրների խորհրդում։

ՊԱՐԻԶ։ Այսօր առաւօտ դատաստանական հիմնարկությունների շինության դահլիճից առանց ինցիդէնտների դուրս բերվեցին Խաչելությունը և կրօնական բովանդակություն ունեցող պատկերները։

ԲԱՐՑԷԼՕՆԱ։ Երէկ երեկոյեան թագաւորի թատրոնից հեռանալու ժամանակ լսվեցին մի քանի շչոցներ. հասարակությունը բողոքեց բարձրաձայն բացականչություններով ի պատիւ թագաւորի և մինիստր-նախագահի։ Տեղի ունեցաւ կռիւ։ Ժանդարմերիան վերականգնեց կարգը։

27 մարտի

ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱ։ Յայտարարված է հրաման՝ նաւատորմի պահեստի օֆիցէրների ծառայության կանչելու մասին։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Մարտի 25-ին Լեռնեան ուղեւորվեցին 25 օս կամաւորներ իրանց սեփական հաշուով։ Սպասում են կրկին 1000 կամաւորների անցնելուն։

ՄԱԴՐԻԴ։ Բարցէլօնայում յանցաւոր փորձ անողը անյայտ է։ Վիրաւորված են երեք մարդ։ Հարևան տների պատուհանները ջարդված են. մէկ պատի մէջ ճեղք է բացվել։ Ռումբի մէջ գտնված են երկաթի մի քանի կտորներ և արճիճի գնդակների մեացորդներ։

ԵՕԿՕՀԱՄԱ։ Ռուսական-նաւատորմը Պօրտ-Արթուրից դուրս եկաւ և երթևեկում է Դեղին ծովում։

ԲԵՐԼԻՆ։ Մարտի 26-ին, «Տայմսի» հաղորդած տեղեկության համեմատ, Կօլատսօ հասան օգնական զօրքեր Դիանգցէից անգլիական յարձակողական շարժումը կանգնեցնելու համար։ Ընդհարումը սպասվում է վաղը։

ԲԵՐԼԻՆ։ Բժիշկները որոշեցին, որ իտալական Ելէնա թագուհին յղիության շրջանի մէջ է գտնվում։

Կ. ՊՕԼԻՍ։ Ուսկիւբից հաղորդած տեղեկությունների համեմատ, ալբանական շարժման անձնատուր եղած երկու գլխաւոր պարագլուխները՝ Սուլէյման Բատուշա և Շախան, կը բերկին լեռները գնացին։

27 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է հետևեալ Բարձրագոյն ուկազը. «Անհրաժեշտ համարելով լրացնել նաւատորմի զօրամասերի կազմը Բալտեան և Սև ծովերի զինուորական նաւահանգիստներում, հրամայեցինք Մենք ներկայ թվին տուած Մեր ուկազով ծովային մինիստրությանը կառավարչին այժմ և եթ պատշաճաւոր կարգադրություններն անել այդ մասին։ Սրա հետ միասին հրամայում ենք իսկական ծառայության կոչել. 1) պահեստի նաւատորմի դեռ ևս չը կանչված օֆիցէրներին. 2) նաւատորմի պահեստի զինուորներին այժմ գործադրվող մոբիլիզացիական ցուցակագրությամբ, հետևեալ նահանգներում՝ Նիժէգօրոդեան, Եարօսլավեան, Սիմբիրսկից, Սարատովեան, Սամարեան Աստրախանեան, Վօլոգդայի, բացի Եարէնսկի և Ուստ-Սիսոլսկից գաւառներից, Պետերբուրգեան, Տավրիկեան և Եկատերինոսլավեան. 3) զօրքի և նաւատորմի պահեստի զինուորներին, որոնք կամաւոր ծառայություն են կատարում կամաւոր նաւատորմի և ռուսաց շոգենաւային և առևտրի ընկերության նաւերի վրա, նոյնպէս և ծովային վարչության նաւահանգստային և տեխնիկական հիմնարկություններում Եւրոպական Ռուսաստանում, բացի Բագուի նաւահանգստից, որոնք անուանված են 1896 թվին զինուորական վարչության նրա տուած հրամանների մէջ և Մեր հաստատած ցուցակում 1897 թվի դեկտեմբերի 20-ին, թողնելով այդպիսիներին իրանց պաշտօններում։ Կառավարչական Սենատը այդ կատարելու համար պատշաճաւոր կարգադրությունը կանէ։» Իսկականի վրա Նորին կայսերական Մեծությանն Սեփական ձեռքով ստորագրված է «Նիկոլայ»։ Ս.-Պետերբուրգում 1904 թվի մարտի 22-ին։

«Русскій Инвалидъ» լրագրում հրատարակված է կանոնադրություն կովկասեան հեծելաբրիգադայի մասին, որ կազմվում է Եապոնիայի հետ պատերազմին մասնակցելու համար երկու գնդից. 1) տէրսկո-կուբանեան և 2) դաղստանեան. իւրաքանչիւր գունդը բաղկացած է 6 հարիւրեակից։ Գնդերը կազմվում են կոչ անելով կամաւորներին։

Կայսերական կառավարությունը ստացաւ բնագիր Սիամի կառավարությունից, որով Սիամի հպատակներին թագաւորի անունից հրամանագրվում է Ռուսաստանի և Եապոնիայի միջև շարունակվող պատերազմի ժամանակ խիստ չեզոքություն պահպանել։

ՍՕՖԻԱ։ (Յատուկ)։ Նաչէվիչին յանձնարարված է վերսկսել բանակցություններ Բ. Դրան հետ։ Իշխանը գնաց Բիլեան վանքը, ուր կանգկացնէ Զատիկը։—Կ. Պոլսից հաղորդում են, որ ապստամբական փոքրաթիւ չէտաներ երևացին Պրիլէպեան շրջանում։ Թիւրքաց իշխանությունները ձերբակալեցին Մուրադին, որը մեղադրվում է քրիստոնեաներին ճնշելու համար Կումանօվում։—Սալոնիկի քաղաքացիական գործակալների պահանջով; մի բէյլիական օֆիցէր ուղարկված է Սորումիցա և Գօրնի Բրոդ՝ բոլգարների և յոյների միջև եղած երկպառակությունները վերջ տալու համար, որոնք նորից բռնկվեցին այն պատճառով, որ նորից մերժվեց բոլգարների մէջ նորդությունը այդ երկու տեղերում եկեղեցիներ կառուցանելու վերաբերմամբ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ («Ռէյտ. գործ.»)։ Պետական դէպարտամենտը վճռեց մինչև պատերազմի վերջանալը նոր հիւպատոսներ չը նշանակել Մանջուրիայում։ Արդէն նշանակված հիւպատոսները ժամանակաւորապէս կը կատարեն հիւպատոսական պարտաւորություններ Պէկինում, Նիւչժուանում և Շանգհայում։

ՊԱՐԻԶ։ Հրատարակված է ֆրանս-անգլիական նոր համաձայնության մի ընդարձակ հատուածը։ Ֆրանսիան արգելք չէ հանդիսանալու Անգլիայի գործունէությանը Եգիպտոսում։ Անգլիան էլ իր կողմից Ֆրանսիային է թողնում Մարօկկօում հանգստություն պահպանելը։ Անգլիան միանում է Սուէզի ջրանցքը չեզոքացնելու 1888 թվի համաձայնությանը։ Համաձայնություն կապող երկու պետությունները ապահովեցնում են Մարօկկօի երկրի հողերի անձեռնմխելիությունը և եղած status quo-ի պահպանությունը։ Մի շարք որոշումներ վերաբերվում են Նիւֆաունդլէնդին։ Սիամին վերաբերվող յայտարարության մէջ վերահաստատում են 1896-ի համաձայնության հիմքերը։ Երկու պետությունները ստանում են արևմտեան Սիամում գործողության լիակատար ազատություն, յետոյ ապահովեցվում է Սիամի թագաւորության անձեռնմխելիությունը և գոյություն ունեցող status quo-ի պահպանությունը։

ԼՕՆԴՕՆ։ (Ռէյտ. գործ.)։ Ստորագրված է ֆրանս-անգլիական համաձայնությունը գաղթավայրերի քաղաքականության հարցի առիթով։

ՕԴԵՍՍԱ։ Մարտի 27-ին Վոլոչիսկի գնացքով ժամանեցին «Վարեագի» և «Կօրէեցի» ասիճանաւորները «Կօրէեցի» նաւապետ Բելեաեվի առաջնորդությունով։ Նրանց հետ ժամանեցին նոյնպէս լէյտենանտ Կլիմովը՝ Սէուլ իջած զօրքի առաջնորդը, և Պօրտ-Արթուրի երկու օֆիցէրների կանայքը, որոնք միացել էին Շանգհայում։ Ծովագնացներին ողջունեցին կայարանում զօրքերի հրամանատարը, քաղաքապետը և քաղաքագլուխը, որ աղ ու հաց մատուց արծաթէ պնակով։ Դրօշակներով զարդարված փողոցներով, ուր զօրքը պատերազմման կանգնած էր երկու կողմից՝ շրջապատված ժողովրդով՝—ծովագնացները կառքով գնացին նրանց համար քաղաքի ծախքով պատրաստված «Լօնդօն» հիւրանոցի սենեակները, ուր զինուորական վարչությունը և քաղաքը նախաճաշով պատուում են նրանց։ Այսօր, ցերեկվայ ժամը 3-ին ենթադրվում է նշանակել ծովագնացների մեկնումը Սեվաստոպոլ։

ՊԱՐԻԶ։ Իզաբելլա թագուհին վախճանվեց ժամը 9 և 45 րոպէին։

Կ. ՊՕԼԻՍ։ Մարտի 26-ին ստորագրվեց Թիւրք-բոլգարական համաձայնութիւնը։ Բոլգարիան պարտաւորվում է խանգարել յեղափոխական կոմիտէների Թիւրքական պետութեան դէմ գործող զինված խմբերի կազմակերպվելուն, նոյնպէս և պատժել իր այն հպատակներին, որոնք ձեռնարկում են յեղափոխական գործողութիւններ Բոլգարիային դրացի գաւառներում։ Յետոյ՝ Բոլգարիան պարտաւորվում է խանգարել մակեդոնական երեք վիլայէթները պայթուցիկ նիւթեր ներմուծելուն։ Յետոյ գալիս են մի շարք որոշումներ, որ պարունակում են Բ. Դրան պարտաւորութիւնները, որոնց մէջ մտցրած է և ներման խնդիրը։ Մնացած չը վճռված հարցերը ենթակայ են խաղաղ յանձնաժողովի լուծման։

28 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թշնամու դէմ գործողութիւնների ժամանակ գերազանց ծառայութեան համար բարձրացվում են. ծովապետի երկրորդ օգնականի աստիճանին «Յեսարեվիչ» զրահակիր նաւի նաւապետ Գրիգորովիչը, նշանակվելով հրամանատար Պորտ-Արտուրի և կվանտունեան էքիպաժի հրամանատար Մատուսեվիչը. երկրորդ կարգի կապիտան Վասիլիեվիչ 2-դը նշանակվում է «Յեսարեվիչ» զրահակրի հրամանատար։

Կ. ՊՕԼԻՍ։ Համաձայնութիւն կայացրած պետութիւնների դեսպանները Բ. Դրանը յանձնեցին մի յիշատակագիր, պահանջելով, որ նա մինչև ապրիլի 7-ը Օսմանեան բանկին յանձնէ 50,000 ոսկի օտարերկրեայ ժանդարմերիայի հիմնարկութեան սկզբնական ծախքերի և մի ամսվայ ռոճիկ տալու համար։—Մակեդոնական ժանդարմերիայի օտարազգի օֆիցէրները մարտի 29-ին գնում են Սալոնիկ։

Կ. ՊՕԼԻՍ։ Մօտ ժամանակներս այստեղից Արաբիա մեկնած յանձնախումբը, որին սուլթանը յանձնել էր քննելու ուխտաւորների կարաւանների վրա յարձակվելու և նրանց կոտորելու գործը, ժամանեց Եմբօ և մեկնում է դէպի Հէջազի վիլայէթը։

ՏՕԿԻՕ։ Պորտ-Արտուրից դէպի հիւսիս ռուսները փորել են 4 մղոն երկարութիւնով մի փոս, որ դիմակաւորված է աղբակոյտերի ծածկոցով, որի տակ ծածկված է ծակող երկաթէ թել։ Լուրերին նայելով՝ Ցզիլեանէնում ճակատամարտ է տեղի ունեցել։

ՆԻԻԶԺՈՒԱՆ։ Այստեղի բերդապահ զօրքը կազմված է 5,000 մարդուց և ունի երեք բատարէա։ 2 օր յետոյ էլ, կը գան 10,000 բայի դրանից պատրաստ են 15,000 էլ, որոնք կարող են Նիւշժուան գալ երբ ուզեն։ Ձեռք են առնված բոլոր պաշտպանողական միջոցները։

ՍԷՈՒԼ։ Գեներալ Կուրօկիի բանակը, որ բաղկացած է 70,000 մարդուց, որոնցից միայն 50,000 են շարքի զինուորներ, կենտրօնացած է Պէնիանի մօտ։ Գլխաւոր առաջապահները կանգնած են Անչժիւում, նրանց մօտ ձիաւոր առաջապահները։—Ֆուզանը ուժեղ կերպով ամրացված է։ Եապօնացիները սաստիկ նեղվում են մրսելուց, և յատկապէս կոկորդի հիւանդութիւններից։—Եապօնացիների բեռնակիր գունդը շատ մեծ է. ամեն մի դիվիզիայի համար կան 6,000 ոչ-շարքերի զինուորներ։—Հաստատվում է, որ Եալուի գետաբերանում երևացել են եապօնական թնդանօթակիրներ։—Նիւշժուանից հաղորդում են, որ այնտեղ վախենում են, թէ եապօնացիները կը յարձակվեն ռուսների Զատկի ժամանակը։

29 մարտի

ՍԷՈՒԼ։ («Բէյտ. գործ.»)։ Եապօնական դեսպանը հաղորդեց կօրէական մինիստրութեանը, որ ռուս զօրքերի նահանջելը Եալուից այն կողմ և եապօնացիների այդ սահմանը գրաւելը կատարված փաստ է և դիմից կառավարութեանը՝ խնդրելով, որ իրանց ծառայողներին ցուցումներ անեն կուլիներ վարձելը հեշտացնելու համար, որպէս զի Սէուլից Ֆուզան երկաթուղու կառուցումը արագութեամբ գլուխ դայ։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ «Մեծ Իշխան Ալեքսէյ» շոգենաւով Սեվաստօպօլ ժամանեցին Բելեաեվ և Զատուխին կապիտանները, Բերլինգ լէյտընանտը, Շիլինգ. Բօյման Բիբիլով, Բուալերով և Լօբադօ մէջմանները, Մերկուլով բժիշկը, Բարսուկով և Դենիսով աստիճանաւորները և ինժենէր-մեքենագէտ Ֆրանկը, միւսները Ճապոնիայում և յետոյ կը գան մաս-մաս։—Եղանակը հրաշալի է։ Կաղտնսկու արձանի մօտ, աւաւտեան ժամի 9-ին հաւաքել էին «Վարեագի» ծառայողներին և բոլոր էքիպաժներից պատուիրակներ իրանց ադիւտանտներով։ Հաւաքված նաւաստիներին բացատրվեց «Մերկուրիայի» արած սխրագործութեան նշանակութիւնը, ցոյց տրվեց դրա նմանութիւնը «Վարեագի» գործի հետ և այն, որ «Մերկուրիայի» վրայի բոլոր ստորին ծառայողները վարձատրվեցին գէորգեան խաչերով։ Յետոյ եկաւ ծովապետը, ողջունեց ծառայողներին, «Քրիստոս յարեաւ» ասաց ու համբուրեց ամեն մէկին առանձին և առողջութիւն մաղթեց Թագաւոր Կայսրին։

ՊԱՐԻԶ։ Երէկ, Զատկի առիթով, ռուսական գաղութի անդամները եկան Նելիդով դեսպանի մօտ արտայայտելու իրանց ամենահնազանդ հպատակային զգացմունքները Թագաւոր Կայսրին և շնորհաւորելու համար։ Ընթրիքի ժամանակ առաջարկվեցին տօստեր Թագաւոր Կայսրի և Թագուհի Կայսրուհու առողջութեան և ռուսական զէնքի յաղթութեան համար։

ՄԱԼՏԱ։ Վիլհելմ կայսրն ընդունեց նահանգապետին, անգլիական էսկադրայի հրամանատարին և գերմանական հիւպատոսին և ճաշեց նահանգապետի ապարանքում։

ԲԱԳՈՒ։ Մօտ օրերս պաշտօնից արձակվեց Ֆարիսանի գեներալ-նահանգապետ Ալիզօուլէն, որը կէրզօնի ճանապարհորդութեան ժամանակ չը գնաց լօրդին ողջունելու, սպասելով նախ կէրզօնի այցելութեանը։ Շահի կառավարութիւնը տեղեկացրեց անգլիական կառավարութեանը այդ արձակման մասին և Լանսդաունը պարլամենտին հաղորդեց Ալիզօուլէի վարմունքի հետևանքի մասին։ Վերջինս փորձված և կրթված վարչական անձ է և Պարսկաստանի համար պիտանի մարդ է։—Պարսկաստանում տեղական վաճառականներից կազմվել է մի ընկերութիւն թէյի տունկ բազմացնելու և մշակելու համար։ Արդէն տնկված են 300,000 տունկեր։

ՋԻՖՈՒ։ (Բէյտ. գործ.)։ Զինական մի շոգենաւ, վերադառնալով Նիւշժուանից, հաղորդեց, որ լօցման ուղարկելու համար արած իր ազդանշաններին ուշադրութիւն չը դարձրին, նոյն վիճակին էին գտնվում և անգլիական երկու նաւեր։ Այդպիսով Նիւշժուանը իսկապէս փակված է առևտրի համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի լոյս 28-ի գիշերը Զմեռնային պալատում լուսաբացի ժամասացութեան ժամանակ կայացաւ Բարձրագոյն ելքը։

ՊԱՐԻԶ։ Այս երեկոյ հրատարակվեց Ֆրանկո-անգլիական համաձայնութեան և յայտարարութեան ընագիրը։ Ութերորդ յօդուածով թոյլատրվում է համաձայնութեան գալ սպանիական կառավարութեան հետ Սպանիային յատուկ շահերի առիթով, որոնք կախված են նրա աշխարհագրական դիրքից և Միջերկրականի մարզերի ամրացման հողային սեփականութիւններից։ Այդ համաձայնութիւնը կը հաղորդվի անգլիական կառավարութեանը։

Կ. ՊՕԼԻՍ։ Ժանդարմերիայի վերակազմութեան համար նշանակված օտարազգի օֆիցէրները կը մեկնեն կիրակի և երկուշաբթի կը ժամանեն Սալոնիկ։ Զիօրջիսի մեկնումը չեռ կասկածելի է, որովհետև նա՝ իբրև թիւրքական օֆիցէր՝ սպասում է սուլթանական հրամանին, որ դեռ չէ ստացվել։

ԲԱՐՑԵԼՕՆԱ։ Երբ Ալֆոնս թագաւորը կառքով անցնում էր յաղթական կամարի տակով, ամբոխի մէջ շուցներ լսվեցին։ Ոստիկանութիւնը ձերբակալեց 13 մարդ։

ՊԱՐԻԶ։ Լուր է պատում, որ գնդապետ Մարշան հրաժարական տուեց այն պատճառով, որ զինուորական մինիստրը չը թոյլատրեց նրան պատերազմական գործողութիւնների բեմը գնալ Հեռաւոր Արևելքում, ուր գնդապետը ուզում էր հետևել ռուսաց պատերազմական գործողութիւններին։

30 մարտի։

ՍՕՖԻԱ։ (Դիմադրական շրջաններից)։ Թիւրք-բոլգարական համաձայնութեան ստորագրելու լուրը հաստատվում է։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ, 28 մարտի։ (Սեփական թղթակցից)։ Հեղեղը փչացրեց հեռագրաթելը, որի պատճառով մի առժամանակ դադարեց հաղորդակցութիւնը։ Հաղորդակցութիւնը արդէն վերականգնված է։—Գիշերը մարտի 27-ին ժամանեց Մեծ Իշխան Բորիս Վլադիմիրովիչ։ Զատկական գիշերը բոլորը սպասում էին եապօնացիների նոր յարձակման, այդ պատճառով լուրջ միջոցներ ձեռք առնվեցին։ Նաւատորմի հրամանատար փոխ-ծովապետ Մակարով զատկական գիշերն անցկացրեց պահապան մակոյկի վրա։ Զատկի կիրակին անցաւ հանգիստ։

ԲԱՂԱԳՈՎԷՇՉԷՆՍԿ։ Զատկական գիշերը ձիւնախառն փոթորիկը ՀԱՍԵՑ հեռագրական գիծը Բլագովէշչէնսկի և Խաբարովսկի միջև։ Գիծն ուղղելու համար միջոցներ են ձեռք առնված։

ՆԻԻԶԺՈՒԱՆ։ («Բէյտ. գործ.»)։ Այստեղի բերդապահ զօրքը առանձին աչալրջութիւն է ցոյց տալիս այն տեղեկութիւնների պատճառով, թէ եապօնացիները եռանդով են գործում Կօրէայում և թէ եկել են եապօնական փոխադրող նաւեր դէպի Եալու և կարելի է, որ եապօնացիները յարձակում գործեն։ Մարտի 23-ին երեկոյեան, երբ Լեաօխէի գետաբերանից հեռացող առևտրական նաւերին տրվում էին լուսային ազդանշաններ ջրի խորութիւնը նշանակելու համար, մարտկոցների կողմից, որոնք չէին հասկացել այդ ազդանշանները, 24 անգամ թնդանօթաձգութիւն եղաւ օգմանեան նաւակների և առևտրական նաւի վրա։ Թնդանօթաձգութիւնը վախեցրեց քաղաքի ազգաբնակութեան և բերդապահ զօրքին, որոնք կարծեցին, թէ եապօնացիներն են յարձակվում։ Գետով անցնող չինական երկու նաւաստիներ սպանվեցին պահապան զինուորների կողմից։

ԲԵՐԼԻՆ։ Զիֆուից ստացված տեղեկութիւնների համեմատ, ապրիլի 1-ին Նիւշժուան կը գայ 2000 մարդուց բաղկացած թնդանօթաձիգ զօրաբաժինը 60 թնդանօթներով։

ՆԻԻԶԺՈՒԱՆ։ («Բէյտ. գործ.»)։ Ամբողջ հարաւային Մանջուրիայում, սաստիկ անձրևների պատճառով, հեղեղված են երկաթուղիական ճանապարհները. ճանապարհներն անանցանելի են. դաշտային հեռագրաթելերը ընկած են. հաղորդակցութիւնը կանգ է առել։

ԽԱՐԲԻՆ։ Դալնիում բռնված 250,000 պուդ թէյը Մոսկվայի համար ուղարկված է Մանջուրիա։—Խարբինում ցուրտ է և անձրև։—Դէպի հարաւ անցան առաջապահ զօրաբաժինները և մի քանի վագոններ ուտեստի պաշարներով և զատկական ընծաներով, որ ուղարկել է Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան։—Կուզնէցօվի ֆիրման դրեց փոխարքայի տրամադրութեան տակ 12,000 պուդ թէյ զօրքերի համար։

ԲԱՐՑԵԼՕՆԱ։ Մինիստր-նախագահ Մանուրա, ընդհանուր խորհրդի շինութիւնից դուրս գալու ժամանակ, վիրաւորվեց խէնջարով։

ԿԻԵՎ։ Առաւօտեան 9 ժամին Հեռաւոր Արևելք ուղևորվեց Կիևի Կարմիր խաչի համայնքի սանիտարական խումբը։ Խումբը բաղկացած է 6 բժիշկներից, 15 քոյրերից և 30 սանիտարներից։

ԲԵՐԼԻՆ։ Տօկիօից ստացված տեղեկութիւնների համեմատ, ֆրանսիական դեսպանը մարտի 29-ին այցելեց հիւանդանոցում ռուս վիրաւոր ծովակալներին և յանձնեց նրանց ընծաներ։ Եապօնական ազգաբնակութեան մէջ յուզմունք է սկսվում պատերազմական բեմից տեղեկութիւնների բացակայութեան պատճառով։

ՍԻՄԼԱ։ («Բէյտ. գործ.»)։ Հնդկական զօրքի գլխաւոր հրամանատար Կիչենէր հրաման արձակեց, որի մէջ յայտնեց իր եզրակացութիւնը հնդկական զօրքի պատերազմական պատրաստականութեան վերաբերմամբ։ Նա զգուշացնում է զօրքը թշնամու անկանոն գնահատութեան դէմ, որի հետ զօրքը կարող էր գործ ունենալ։ Նա մատնացոյց է անում, թէ հարկաւոր է ներկայ հանգամանքներին յարմարեցրած մշակված սիստեմին հետևել և դէն գցել հնացած ձևերը, յիշում է, թէ անհրաժեշտ է կատարելագործել գլխաւոր շտաբը և յայտնում է, որ Հնդկաստանում շուտով կը բացվի յատուկ հիմնարկութիւն գլխաւոր շտաբի օֆիցէրներ դաստիարակելու հնդկական զօրքի համար։

ՊԱՐԻԶ։ Նելիդով յայտնեց «Temps» լրագրի խմբագրին, որ Ֆրանս-անգլիական համաձայնութիւնը գոհութեան զգացմունք կառաջացնէ Պետերբուրգում։ Ռուսաստանը ուրախ է Ֆրանսիայի համար ամեն մի բաղդաւոր դէպքին։ Որպէս դաշնակից Ռուսաստանը ուրախութեամբ կընդգծէ ոյժի և վստահութեան նոր գրաւական, որ Ֆրանսիան ձեռք է բերում համաձայնութեան շնորհիւ։ Այդ համաձայնութիւնը ազատում է շատ հոգսերից և վէճերից և շատ կարելի է «Մեր բերեկամների բարեկամները—մեր բարեկամներն են» առածը արդարանում է ներկայ դէպքում. այդպէս են բոլորի տածած զգացմունքները Պետերբուրգում։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Ժամանեց Բուրբօնեան Խաիմէ պրինցը։

ՀՌՕՄ։ Գուբաստով յանձնեց պապին իր յետ կանչվելու թղթերը ապրիլի 1-ին և ապրիլի 3-ին կուղևորվի Բելգրադ։ Պապը շնորհեց Գուբաստովին Սուրբ Գրիգորի շքանշանը։ Յաջորդը յայտնի չէ։

ՍՕՖԻԱ։ (Դիմադրական շրջաններից)։ Դիմադրական շրջանները յոռետեսութեամբ են վերաբերվում Թիւրք-բոլգարական համաձայնութեանը։ Կարծում են, որ այդ համաձայնութիւնը մեռած տառ կը մնայ։

31 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի հեռագիրը Նորին Մեծութեան առնուով 1904 թ. մարտի 30-ին. «Գեներալ Կաշտալինսկին մարտի լոյս 26-ի գիշերը ուղարկեց զօրախմբեր դէպի Եալուի ձախ ափը Ի-Զժուի դիմաց։ Կամաւորների խումբը պօրուչիկ Դէմիդովիչի և պօդպօրուչիկ Պօտեմկինի հետ անցկացաւ գետով դէպի Սամալինդա կղզին և յանկարծակի բերեց 50 հոգուց բաղկացած եապօնական խուզարկու խումբը, որը մօտենում էր այդ ժամանակ երեք մակոյկներով դէպի կղզու արևելեան ափը։ Թոյլ տալով նրանց ափ իջնել, կամաւորները յարձակվեցին «ուրա» կանչելով և համարեա բոլոր եապօնացիները սրախողխող և գնդակահար եղան կամ խեղդվեցին, իսկ մակոյկները օդը թռցրվեցին։ Մենք կորուստներ չունենք։ Առանձնապէս քաջութիւն գործեցին Լուչկին և Բումաշէդով ունտէր-օֆիցէրները։ Հետևեալ օրը եապօնական դրօշակը Ի-Զժուում մի փոքր իջեցրված էր, իսկ առաջ երևացող պահակները յետ քաշվեցին։ Մարտի լոյս 27-ի գիշերը 4 կամաւորներ գետով անցան Եօնամաղ դէպի ռուսաց աւանը, ուր գտան մի էսկադրօն։ Կամաւորներին, որոնք 12 ժամ մնացին այնտեղ, կօրէացիները մատնեցին և հարկադրված էին լողալով փախչել, որովհետև նրանց նաւակը խրվեց ծանծաղուտի մէջ. այդ ժամանակ խեղդվեց ենֆրէյտոր Բօման Խարկով։ Նաւակով վազող եապօնացիները հանդիպեցին մեր նաւակին, որ օգնութեան էր գընում լուղորդներին և կոտորածի ենթարկվեցին, իսկ նրանց նաւակը ջրասոյզ արվեց։ Վերոյիշեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը»։

ՍԷՈՒԼ։ («Բէյտ. գործ.»)։ Եապօնական իշխանութիւնները հաստատում են, որ Զօնժիւի և Ի-Զժուի միջև տեղի են ունեցել մասնաւոր ընդհարումներ։ Առաջին եապօնական զօրքի գլխաւոր ոյժերը գտնվում են Ի-Զժուի մօտ։

ՏՕԿԻՕ։ (Բէյտ. գործ.)։ Այստեղ հերքում են ռուսական աղբիւրներից ըղխող այն մեղադրանքները, որ իբր թէ եապօնացիները ի չարն էին գործ դնում Կարմիր Խաչի դրօշակը բարձրացնելու իրաւունքը։

ԲԵՐԼԻՆ։ (Ցատուկ)։ Պէկինից հաղորդում են, որ եապօնական նաւատորմի գործողութիւնների ընդմիջումը պէտք է վերագրել ալդէն մի քանի օր շարունակվող փոթորիկին։

ԲԵՐԼԻՆ։ (Բէյխստագ)։ Պատասխանելով բազմաթիւ հարցապնդումներին, կայսերական կանցլերը յայտնեց, որ անգլօ-ֆրանսիական համաձայնութիւնը սպառնալիք չէ որ և է պետութեան համար։ «Մենք չը պէտք է ցանկանանք լրված յարաբերութիւններ Ֆրանսիայի և Անգլիայի միջև, որովհետև այդպիսի յարաբերութիւնները կարող էին սպառնալ ընդհանուր խաղաղութեանը»։ Ապա Բիւլով շարունակեց. «Արևելեան Ասիայում մենք ամեն ինչ արինք, ինչ որ կարող էինք, որպէս զի մենամարտը Հեռաւոր Արևելքում հասարակային պատերազմի չը փոխարկվի։ Դրա մէջն է կայանում մեր օրինական և շիտակ չեղոքութեան հիմքը։ Ի պատասխան այն յանդիմանութեան, թէ պատերազմական գործողութիւնների սկսվելը մեզ համար անսպասելի նորութիւն էր, ձեր ուշադրութիւնն եմ դարձնում այն բանի վրա, որ զեկավարող մինիստրների համար Լօնդօնում և Պարիզում և մինչև անգամ իրանց՝ եապօնական ներկայացուցիչների համար Պարիզում և Պետերբուրգում անսպասելի նորութիւն էր պատերազմական գործողութիւնների սկսվելը։ Մեզ յանդիմանում էին, որ մենք հետաքրքրվում էինք Զինաստանի չեզոքութեամբ,—շատ էական է այն հանգամանքը, որ չինական մեծ կայսրութիւնը չը խառնվի ներքին ընդհարման մէջ։ Մեր յայտնած հայեացքը ի նպաստ Զինաստանի չեզոքութեան ամենալաւ ապացոյց է այն բամբասանքների դէմ, որ իբր թէ մենք ցանկանում էինք օգուտ քաղել պատերազմից, որպէս զի գրաւենք չինական հողի մի մասը։

ԼՕՆԴՕՆ։ («Բէյտ. գործ.»)։ Համայնքների ժողով։ Բալֆուր հաղորդեց, որ բարդութիւնների պատճառով Տիբէտում անհրաժեշտ կը լինի, համաձայն գոյութիւն ունեցող օրէնքների, համայնքների ժողովի թոյլատրութիւնը խնդրել հնդկական զօրքերը գործադրելու համար Հնդկաստանի սահմաններից դուրս։ Այդ առիթով առաջարկութիւնը կը ներկայացվի մարտի 31-ին։

ԲԱՐՑԵԼՕՆԱ։ Մինիստրի կեանքի դէմ յան-

ցաւոր փորձը հերքվում է։ Դէպքը միայն այն էր, որ օրինաւոր հագնված մի երիտասարդ վազեց դէպի մինիստրի կառքը բարձրացրած բռունցքներով և ուզում էր հարուածներ հասցնել։ Երիտասարդը ձերբակալվեց։

ՍՕՖԻԱ։ Կ. Պոլսից հաղորդում են, որ ժանդարմերիայի վերակազմութեան համար կազմված յանձնաժողովը վերջին նիստն ունէր և վճռեց սանջակները օտար ազգի օֆիցէրների միջև բաժան-բաժան անելու հարցը։ Ռուսաստանը կը ստանայ Սալոնիկ և չորս հարաւային գաւառները, Աւստրիան—Ուսկիւբի վիլայէթը, Իտալիան—Մօնաստիրի սանջակը և Սէլֆիջէ, Ֆրանսիան—Սերեսեան սանջակը և Անգլիան—Դրամեան սանջակը։ Սպասում են սուլթանի իրաւէին, որով պէտք է հաստատվի թիւրք-բոլգարական համաձայնութիւնը։—Զատկի ուրբաթը անցաւ Մակեդոնիայում առանց որ և է ընդհարումների յոյների և բոլգարների միջև։

31 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի լոյս 29-ի գիշերը դէպի Լեռօխէի գետաբերանը, ծանծաղուտի կողմից, սկսեց մօտենալ ափին մի ինչ-որ նաւ փայլփլող կրակներով. 2000 սաժէն հեռաւորութիւնից նրա վրա կրակ բացին, բայց նաւը սկսեց աւելի ևս արագ մօտենալ ափին և միայն մի քանի թնդանօթաձգութիւնից յետոյ հանգցրեց կրակները և հեռացաւ։ Թնդանօթաձգութիւն սկսելու ժամանակ գետի աջ ափից հիւսիսային վօկզալի կողմից նաւերով հեռացան ինչ-որ ջօնկիներ, որոնց վրա կրակ բացին մեր հրացանաձիգները։ Ջօնկիները յետ դարձան։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Բայկալի վրայի երկաթէ գծերի հաւաքումը վերջացել է։ Սառոյցը լաւ է. հաղորդակցութիւնն անարգել է։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐԴ։ («Բէյտ. գործ.»)։ Միջոցներ են ձեռնարկված պատերազմի ժամանակ անգլիական շահերը պաշտպանելու և քաղաքում պայմանագրված իրաւունքները վերականգնելու համար։ Անգլիական թնդանօթակիր նաւակի հեռանալը ռուսական իշխանութեան ձեռքերն ազատում է և հնար է տալիս գործադրելու պատերազմական դրութիւնը։ Այսօր հեռացան վերջին առևտրական նաւերը։ Նաւադնացութեան ընկերութիւնները հաղորդեցին այստեղի գործակալներին, որ այլ ևս նաւեր չեն ուղարկի։ Քաղաքի փողոցները չեն լուսաւորվում. գիշերը պետի վրա նաւերի բոլոր շարժումներն արգելված են։

ՏՕԿԻՕ։ («Բէյտ. գործ.»)։ Ենթադրում են, որ Եալուի վրա ընդհարումներն սկված են, թէև ոչ մի անմիջական տեղեկութիւն չէ ստացվել։ Առաջին զօրաբանակում գտնված զինուորական գործակալները հրաւէր ստացան մեկնելու պատրաստ լինել։ Ենթադրում են, որ նրանք մի քանի օրից կը մեկնեն։

ՄԻԻԿԻԷՆ։ («Յատուկ»)։ Այստեղ ժամանեցին արտասահմանեան ուժ զինուորական գործակալներ։

ՍԵՎԱՍՏՈՊՕԼ։ Զէնքի հրաւիրող կոչի վրա ստորին ծառայողները և օֆիցէրներն սկսում են հաւաքվել։ Ամեն ինչ կատարվում է լիակատար կարգով և հանգստութեամբ։

ԲԼԱԳՈՎԵՇՉԵՆՍԿ։ Հեռագրական գիծն ուղղված է Խաբարովսկի հետ յարաբերութիւնը վերսկսված է։

ՍԵՎԱՍՏՈՊՕԼ։ Ռուդնեվը վերջին խմբի հետ միասին սպասվում է Օդէսայում կիրակի, ապրիլի 4-ին։ Սեվաստոպօլ ենթադրվում է հասնել երեքշաբթի. ընդհանուր մեկնումը լինելու է ապրիլի 9-ից ոչ շուտ։ Սեվաստոպօլը պատրաստվում է դիմաւորելու և ճանապարհելու Ռուդնեվի հետ ժամանող «Սեվաստոպօլ» զրահակիրի 50 ծառայողներին, որոնք առաջ Սէուլի ռուս դեսպանատան պահակախումբն էին կազմում, և որոնք կրկին գնում են իրանց զրահակիրը նաւը։

ՕԴԷՍՍԱ։ Պատերազմի դաշտը մեկնեցին Կարմիր Խաչի Կասպերօվեան համայնքի կազմակերպած առողջապահիկ խումբը 200 մահճակալի համար։

ՍԻԵՍՍԱ։ Ռուդնեվը յայտնում է, որ Օդեսա են գալիս ֆրանսիական «Ուրիմ» նաւով «Վարեագի» 217, «Կօրէեցի» 157 և Սէուլի դեսպանատան պահակի 50 նաւաստիները և 13 կօզակները, 10 վիրաւորներ և 10 հիւանդներ։ «Ուրիմը» կը հանդիպի Սալոնիկ և Կ. Պոլիս և Օդեսա կը գայ ապրիլի 5-ին, առաւօտեան։ Հերոսներին պատրաստվում է հանդիսաւոր դիմաւորութիւն։

ԲԱՐՑԷԼՕՆԱ։ Մինիստր նախագահ Մաուրայի կեանքի դէմ փորձ անող մարդը Արտալ անունով մի սպասաւոր է։ Ձերբակալութեան ժամանակ նա բացականչեց. «Կեցցէ անիշխանութիւն»։ Զարագործը բռնած էր ձեռքին խոհանոցի մի մեծ դանակ։ Զէնքը սահեց մինիստրի համազգեստի կարերի վրայով և թեթև քերվածք պատճառեց։

ՄԱԴՐԻԴ։ Արտալը քանդակագործ է և, անգործ մնալով, սպասաւոր է վարձվել։ Նա ասում է, որ դաւակիցներ չունի։ Մամուլը և հասարակական կարծիքը միաձայն դատապարտում են Արտալին։

ԼԻՄԱ։ («Բէյտ. գործ.»)։ Ժանտախտը դանդաղ տարածվում է։ Օրական 11 հիւանդութեան դէպքեր են նկատվում։

ԿԵՕԼՆ։ «Քեօլնիշէ Ցայտունգը» հաղորդում է, որ սպանական թագաւորը մտադիր է սեպտեմբերի սկզբներին այցելել Վիլհելմ կայսրին Բերլինում։ Այցելութիւնից առաջ թագաւորը կը գնայ Պարիզ։

ԼՕՆԴՕՆ։ («Բէյտ. գործ.») Այստեղ հրատարակված է անգլօ-ֆրանսիական համաձայնութեան բնագիրը։

ՊԱՐԻԶ։ Հաստատուն աղբիւրից ստացված տեղեկութիւնների համաձայն, գնդապետ Մարշանը իսկապէս հրաժարական է տուել։ Բոլորովին հնարովի է, որ պնդում էին, թէ դա առաջացել է նրանից, որ նրան առաջարկել են մասնակցել Մանջուրիայում պատերազմական գործողութիւններին։ Այդ վճռի պատճառը, կարծես, նրա մօտակայ ամուսնութիւնը պէտք է լինի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նաւահանգստի հրամանատար կօնտր-ծովապետ Գրիգօրովիչի հեռագիրը Նորին Մեծութեան անունով Պօրտ-Արտուրից 1904 թուի մարտի 31-ից. № 1 «Պետրոպավլովսկ» զրահակիրը դիպաւ ականին, օդը թռաւ և շուռ եկաւ։ Մեր էսկադրան գտնվում է Ոսկէ լեռան տակ։ Եապօնականը մօտենում է։» № 2. «Ծովապետ Մակարովը ըստ երևոյթին սպանված է։» №3. «Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրովիչ փրկված է։ Նա թեթև վիրաւորված է։» №4. «Ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Մեծութեան, որ առայժմ Պետրոպավլովսկից հանված են, բացի Մեծ Իշխանից, ծանր վիրաւորված 1-ին կարգի կապիտան Եակովլեվ, լէյտենանտներ Ենիշ և Ունկովսկի, միչմաններ Շմիդտ, Եակովլեվ և Շլիպպէ և 32 ծանր ու թեթև վիրաւորված նաւաստիներ։ Գտնված են 2-ր կարգի կապիտան Վասիլիեվի, լէյտենանտ Կնօրրինգ 1-ի, միչմաններ Եկիմովի և Բուրաչկի, աւագ բժիշկ Վօյկովիչի և 12 նաւաստիների դիակները։ Եապօնական նաւատորմը հեռացաւ։ Գալոց մանրամասնութիւնները կը զեկուցանէ նաւատորմի ժամանակաւոր հրամանատարութիւնը ձեռքն առած կօնտր-ծովապետ Իշխան Ուխտոմսկիյ»։

Փոխարքայ գեներալ-ադիւտանտ Ալէքսէեվի հեռագիրը Նորին Մեծութեան անունով Մուկդէնից 1904 թուի մարտի 31-ից, № 1. «Գեներալ-լէյտենանտ Ստէսելից հէնց նոր ստացած հեռագրի հիման վրա, մեծ վշտով ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Մեծութեանը, որ նոր ծանր կորուստի հետ միասին խաղաղ-ովկիանական նաւատորմը կորցրեց յանձին փոխ-ծովապետ Մակարովի իր փառաւոր և փորձված պատերազմիկ հրամանատարի, որը ոչնչացաւ ծովապետային նաւի հետ միասին։ Զրահակիրները և կրէյսէրները նաւատորմի հրամանատարի դրօշակի տակ թշնամու երևալուն պէս դուրս եկան ծովը, հալածեցին թշնամու ոյժերի մի մասը և վերջինների ոյժերը 30 դանազան նաւերով մեծանալու պատճառով, վերադարձան նաւակայանը, և այդ ժամանակ «Պետրոպավլովսկ» զրահակիրը դիպաւ ականին, որի հետևանքն էր զրահակիրի կորուստը։ «Պետրոպավլովսկ» զրահակիրի վրա գտնվող Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրովիչ փրկված է. նա թեթև վերք ստացաւ։ Էսկադրան ամբողջապէս մտաւ ներքին նաւահանգիստը։ Եապօնական էսկադրան Լեռօտէշանի մօտ է։ Նաւատորմի հրամանատարից մինչև ներկայ հեռագրի ուղարկելը ոչինչ զեկուցումներ չեն ստացված։ Վերոյիշեալը ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Մեծութեանը։»

Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի հեռագիրը Նորին Մեծութեան անունով 1904 թուի մարտի 31-ից. «Գեներալ Կաշտալինսկիյ զեկուցանում է, որ առաւօտեան մարտի 30-ին եապօնացիների հետ հրացանաձգութեան ժամանակ առաջապահակների վրա սպանված են 12-դ գնդի քաջարի օֆիցէր պօրուչիկ Դէմիդովիչ և ունտէր-օֆիցեր Լուչկին, որոնք իրանց քաջութեան համար արդէն ներկայացված էին պարգևների, և երկու հրացանաձիգներ սպանվեցին և երկուսը վիրաւորվեցին։ Վերոյիշեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Մեծութեանը։»

1 ապրիլի

ԽԷՐՍՕՆ։ Հեռաւոր Արևելք ուղևորվեց բժշկական խումբը Կարմիր խաչի խէրսօնեան համայնքի շարժական հիւանդանոցով։

ԲԱՐՑԷԼՕՆԱ։ Մարտի 31-ին վիրաւորված Մաուրայի առողջական դրութիւնը լաւ է։ Ցանցաւորը փորձը նախապատրաստված էր մի շաբաթ առաջ։ Արտալը մի քանի օր շարունակ հետամուտ էր լինում մինիստր Մաուրային և դաւակից ունէր, որը ձերբակալվեց անցեալ գիշեր։ Երկուսն ևս պատկանում էին յեղափոխականների դաշնակցութեանը։

ԼՕՆԴՕՆ։ («Բէյտ. գործ.»)։ Այստեղի պարսկական միսսիան կտրականապէս հերքում է այն հաղորդագրութիւնը, թէ Ֆարսիստանի գեներալ-նահանգապետ Ալանի-դուլէ հեռացրված է գեներալ-նահանգապետի պաշտօնից. նա կանչված է Թեհրան մասնակցելու համար այն խորհրդակցութեանը, ուր գաւառական իշխանութիւնները քննում են ներքին տնտեսական հարցերը։

Կ. ՊՕԼԻՍ։ («Կօրբէսպ. Բիւրօ»)։ Թիւրքերը բերանացի արդէն խոստացել են դաշնագիր պետութիւնների դեսպաններին կատարել նորերս արած ֆինանսական և այլ պահանջները ժանդարմերիայի վերաբերմամբ։ Գեներալ Զիօրջիս ճանապարհ է ընկնում ապրիլի 1-ին։

ՆԱՆՍԻ։ Գլխաւոր խորհուրդը միաձայն արտայայտեց ռուսական քաջ բանակի Միապետին և ազգին իր բարեմաղթութիւնները։

Կ. ՊՕԼԻՍ։ («Կօրբէսպ. Բիւրօ»)։ Առանձին յանձնաժողով է նշանակված Թիւրք-բոլգարական համաձայնութեան վճիռները գործադրելու համար։

ՄՕՍԿՎԱ։ Բերվեց Պօրտ-Արտուրում վիրաւորված գնդապետ Զաիսնչկովսկին և ժամանակաւորապէս տեղաւորվեց Իվերական հաստատութեան մէջ, իսկ յետոյ կուղևորվի Պետերբուրգ։

ԼՕՆԴՕՆ։ («Բէյտ. գործ.»)։ Համայնքների ժողովում Հնդկաստանի գործերի ստատս-սեկրետարը կարդաց մի հեռագիր, որի համաձայն գեներալ Մակդոնալդը մարտի 29-ին, առանց կորուստի հասել է Գիանդցզէ։ Նրան դիմաւորելու են գնացել տիբեթական չորս պատգամաւորներ։

Կ. ՊՕԼԻՍ։ («Կօրբէս. Բիւրօ»)։ Ֆրանսիական «Ուրիմ» շոգենաւը «Վարեագի» նաւապետ Ռուդնևվը, երեք օֆիցէրներ և 483 նաւաստիներ վրան, դուրս եկաւ Կանէայից և Օդեսա կը ժամանէ ապրիլի 4-ին։

ԲԵՐԼԻՆ։ Լէյտվէյն նահանգապետը հաղորդում է, որ Օկագանդիում գտնվել են թշնամու 80 դիակներ և թարմ գերեզմաններ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փոխ-ծովապետ Իշխան Ուխտոմսկու հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան անունով Պօրտ-Արտուրից 1904 թուի ապրիլի 1-ին. «Մարտի 31-ին 10-դ ժամին, նաւատորմի կատարած շարժումների ժամանակ Պօրտ-Արտուրի նաւակայանում, թշնամու նաւատորմը երևեցած ժամին, «Պետրոպաւլովսկ» զրահակիրը, որ կրում էր նաւատորմի հրամանատարի դրօշակը, պայթումից յետոյ շուռ եկաւ։ Կորաւ նաւատորմի հրամանատարը և շտաբի գլխաւորը։ Ազատված են Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրովիչ, նաւապետ Եակովլեվ, լէյտենանտներ՝ Ունկովսկի, Տենիշ և Դուկէլսկի, միչմաններ՝ Վլադիմիր, Շմիդտ, և Շլիպպէ և 52 նաւաստիներ։ Գտնված են 2-րորդ կարգի կապիտան Վասիլեվի, միչմաններ Ակիմովի և Բուրաչկի, բժիշկ Վօյկովիչի և մի քանի նաւաստիների մարմինները։ Այն ականակիր նաւերից, որոնք երէկ ուղարկված էին գիշերային արշաւանքի, «Բեղշարաշնի» ականակիրը, վատ եղանակի պատճառով, բաժանվելով նաւախմբից, շրջապատվեց թշնամու ականակիրներից և կռուի բռնվելով նրանց հետ, ոչնչացաւ։ Ազատված են 5 հոգի։ «Պետրոպավլովսկ» զրահակիրի կորուստից յետոյ ևս ժամանակաւորապէս յանձն առայ նաւատորմի հրամանատարի պարտաւորութիւնները։ Էսկադրայի տեղափոխութեան ժամանակ «Պօբէդա» զրահակիրը ականի հարուած ստացաւ աջ նաւեզրի մէջտեղում։ Սպանվածներ և վիրաւորվածներ չը կան։»

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՀԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Մ. Դ. ԷՒԵՏԻՄԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.

Գ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ատամնջի. քթի և կոկորդի հ.

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳԱԲԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. Սօլոզով ատամնաբոյժ. 9—11 ժ.

ԵՐԵԿՈՅՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՄՑՈՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.

Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), ներքին և վեներական հ.

ԿԻՆ-ԲԺԻԶԿ ՁԵՐԲԻՆԻԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Վճարը 10 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ա. ՌԻՎԱՆԻՑԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. գիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։

Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ

Լոյս տեսաւ երդուեալ հաւատարմատար

Ս. Ս. ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻ

«ПРАКТИЧЕСКОЕ РУКОВОДСТВО

для составленія бумагъ по дѣламъ Гражданданскаго Судопроизводства въ Закавказскомъ Краѣ».

Գինն է 1 բուբլի։

Վաճառվում է Թիֆլիսում. Կենտրօնական, Խիղդէկէլի և Գուտաէնբէրգ գրավաճառանոցներում։ Հեղինակին դիմողները՝ (прис. повѣр. С. С. Меликъ-Адамову. Тифлисъ, Межевая ул., д. № 40), 10 օրինակից աւելի պահանջով՝ ստանում են 10% զեղչ և ճանապարհածախս չեն վճարում։ (ե. հ. շ.) 6—10

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին, ամեն օր առաւօտեան 12—2, երեկոյեան 5—6։ Վեր Վանքի փողոց, տուն Կուզանովի, Բախչիեվի դեղատան կից։

ԲԺՇԿԱՊԵՏ

Գր. Տեր-Գրիգորեանց

ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւնների. 154. Միքայէլեան պրոսպէկտ, տելէֆոն 825. (շ. ե. հ. շ.) 15—105

ՎԻԵՆՆԱ. ԲԺ. Պ. Մ. ԱՓՐԻԿԵԱՆ

Կազմում է խորհուրդներ տեղիս մասնագէտ-պրոֆէսօրների հետ Ռուսաստանից եկող հիւանդների համար։

Հասցէն Wien, Spiegelgasse, 3, IV stock. 19—50

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնը 9—11 ժ. առաւօտը և 5—7 ժ. երեկոյեան։

Վելիամինովսկայա փողոց, տ. Սաֆարովի, № 13. (չ. ու. կ.) 30—50

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր.

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վելիամինովսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։ 43—100

Բժշկ. Բ. Նաւասարդեան

Թիֆլիսից փոխադրվեց ՐՕՍՏՕՎ.

Հիւանդներին ընդունում է 11½—1½ ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։

Б. Садовая, 136, д. Бакалова.

(ո. կ. ե. հ.) 6—100

ՎԻՊԱԹԵՐԹ
ՀԱՆԴԷՍ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ

1. «Մերժուած սէր», պօլսական կեանքի դրուագներ, ազգային վէպ, գրած է պ. Ե. Սրմաքէշխանլեան։
2. «Տոհմեր և գաղտնիք հաւատաքննութեան», հեղինակութիւն պ. Պ. Մառիոյի և Լօնէյի։ (Այս վէպը բնաւ կապ և նմանութիւն չունի տարիներ առաջ հրատարակուած Գաղտնիք Հաւատաքննութեանի հետ)։
3. «Խորհրդաւոր դատ», Ֆոռթիւնէ տիւ Պոակոպէի։

Բաժանորդագրութեան պայմաններն են՝

Պուլկարիոյ համար	տարեկան	5	ֆրանք
Արտասահմանի »	»	6	»
Ամերիկայի »	»	1 տոլ. 20 սենտ	
Ռուսիոյ »	»	2 բուբ. 30 կ.	

Հրատարակիչ՝ Օննիկ Բարսեղեան

Հասցէ՝ REVUE VIBATERT, Imprimerie Orientale VARNA (Bulgarie).

Բարձր դասակարգի կանայք ինչպէս և գեղեցկութեամբ ամենանշանաւոր դերասանուհիները հրաժարվեցին գործածել ԿՕՅԼԴ ԿՐԵՄ (Cold Creme), որ դառնահամ է և իւղալի տեսք է տալիս դէմքին։ Դրա տեղ նրանք գործ են ածում

CREME SIMON

(Կրեմ-Սիմոն) գեղեցիկ հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբէք չի փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի շնորհալութիւնն ու երիտասարդական թարմութիւնը։

LA POUDRE SIMON

(Պուդր Սիմոն) La savon á la Creme Simon (Օճառ Սիմոնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա զարմանալի յատկութիւնները J SIMON 59 Faubourg St. Martin Paris. Մաս-մաս վաճառվում է վարսավիրների, պարֆիւմերների և դեղագործների մօտ։

(Метцль) 2· 6—15

Լոյս տեսաւ № 9.

ՄԱՔՍԻՄ ԳՕՐԿԻՑ

Դանկօի սիրտը

Թարգմ. Առշակ Աբայեան

Գինն է 3 կօպ.

Գումարով գնողներին 30% զեղչ։ Ճանապարհածախսը իրանց վրա։ Դիմել՝ Въ Тифлисъ (Пушкинскій пассажъ). Гев. Бабурянцу.

2—2

Լոյս տեսաւ Հ. Մ. Հ. ԳԱՒԱՌԱՑԻԻ կազմած

Առակներ, Հանելուկներ, Թերահաւատութիւններ

ԽՈՑՐՋՐՈՅ

գիրքը։ Գինն է 50 կ.

Դիմել՝ Тифлисъ, Сололакская улица, пекарня Калуняна. 2—2

ԲԺԻՇԿ Կ. ՂԱԶԱՆՃԵԱՆԸ

Տեղափոխվելով Կարս ընդունում է հիւանդներին առաւօտեան ժամը 9-ից մինչև 12, երեկոյեան 5-ից մինչև 6 ժամը։

Միխայլովսկայա փողոց, տուն Մակիեվի։

10—10

Զգուշացէ՛ք կեղծուածներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՈՆ

Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպինները, սեւութիւնը, դեղին բծերը, պուղիկները և պտուկները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ ապօն, բարձր արժանաւորութեան։

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թւի համար։

Կտորի գինը 50 կ., 1/2 կտորի 30 կ.։

Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագազիններում և դեղատներում։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում, Ագմուրովի մօտ, դեղագործական ապրանքների առեւտրի կովկասեան ընկերութեան մէջ, Ծուբինովի և Գրիգաչի, պ.պ. Պոպովների և Արիստակովի մօտ։ (1, 15) 5—24

Լոյս տեսաւ

Արիստակես եպիսկոպոս Սեդրակեանի

«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԿԵՐԱՅԱՐԳՈՒԹԻՒՆԸ»

անունով պատմական տեսութիւնը. Մասն 1-ին։

Ծախվում է «Կենտրօնական» և «Գուտտէնբէրգ» գրախանութներում և Ալ. Ստեփանեանցի մօտ, Զուբալովի քարվանսարայում։

Գինն է 1 ր. 50 կօպէկ։

1—3

ՎՐԶԻՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ

երկու հատոր

Գինն է 1 ր. 50 կ.

Դիմել Թիֆլիս. Ա. Քալանթարին, կամ «Գուտտէնբէրգ» գրավաճառանոցին։

Լոյս տեսաւ

Հ. ԱԲԱՔԵԼԵԱՆԻ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

երրորդ գիրքը

ՃԱՊՕՆԻԱ

կամ Ծագող արեգակի երկիրը

հեղ. Շրէյդերի.

Պատկերով և քարտէզով. գինն է 25 կօպէկ։

Դիմել գրավաճառներին, իսկ մեծ քանակութեան համար հրատարակչին։

Ծախվում է՝ սակաւաթիւ

Լ.—ՄԱՆ.

ՕՋԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Գինն է 15 կ.

Դիմել «Գուտտէնբէրգ» և «Կենտրօնական» գրավաճառանոցներին։ շ. կ. ե. հ. շ. 2—5

Իմ աշխատութեամբ լոյս են տեսել հետեւեալ

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Աշակերտաց համար

1. Դասատետր	կրօնի	ա.	տարի	. —	25
2. »	»	բ.	»	. —	20
3. »	»	գ.	»	. —	30
4. Հին-ուխտ		գ.	»	. —	35
5. Նոր-ուխտ		ե.	»	. —	40
6. Դորձք առաքելոց		զ.	»	. —	40

Ուսուցչաց համար

7. Ուղեցոյց կրօնի—հին-ուխտի (սպառ.)—				—	—
8. » » —նոր-ուխտի				. 2—	50
9. Ուսումն քրիստոնէական կրօնի				Դ. հ. 1—	50
10. » »				Ե. » —	50

Ինձ դիմողները ստանում են 1) 6 տարիների համար 25%. 2, 3, 4, 5 տարիների համար 20%, իսկ 7, 8, 9, 10 տարիների համար 35% զեղչ։

Կարելի է դիմել—1) ինձ (коммерческое училище), 2) Центральная книжная торговля և 3) Книжный магазинъ «Гуттенбергъ».

67—100 Սահակ քահ. Սահակեանց

!!ՊԱՀԱՆՋԵՑԻՔ!!

Լոյս տեսաւ

ԵՂԲ. Գ. ԵՒ Մ. ՓՐԻԴՕՆԵԱՆՆԵՐԻ

Կովկասեան Ամենամեծ ՏՆԿԱՐԱՆԻ

պտղատու ծառերի պատկերազարդ կատալոգը։ Տնկարանը գտնվում է Անդրկովկասեան երկաթուղու ՍԿՐԱ. կայարանի մօտ



ԿԱՏԱԼՕԳՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԶՐԻԱՊԷՍ։

Պահանջեցէք ուղղել հետեւեալ հասցէով. М. Е. Придонову, въ Тифлисѣ, Сергіевская, 11.

(հ. կ.) 12—12

Լոյս տեսաւ

ՄԻՔ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆԻ

*** Բանաստեղծութիւններ 15 կ.

Հասցէն. Тифлисъ, К-ра нотаріуса Мгеброва.

Լոյս տեսաւ

ՊՐՕՖ. Ռ. Ա. ԲՕԼԼԷՍԻ

ՀՐԱՇԱԼԻ ԴԱՐ

Տոմսևինների դարի դրական և բացասական կողմերը, թարգմ. և հեղինակի (գարվինականութեան առաջին հիմնադիրներից մէկի) կենսագրութիւնը գրեց Սս. Լիսիցեան

Գինն է (260 մեծադ. երես)—80 կ.

Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրախանութներում և թարգմանչի մօտ՝ Թիֆլիս, (Բեհբութեան փողոց, 29)։

Նոյն թարգմանչի՝ Բրեհ-Հարս. «Իսնրսուն և ութը տարի առաջ», գինն է 25 կօպ.

8—3

ԵՍ, ԱՆՆԱ ՉԻԼԼԷԱՊ

տեսցի իմ արտասովոր երկար մազերս (185 սանտիմէտր երկար.), որոնք յիշեցնում են Լորելէյի մազերը։—Շնորհիւ իմ հնարած պօմադայի 14-ամսեայ գործածութեան։ Այս պօմադան ճանաչված է իբրո լաւ միջոց մազերի թափվելու դէմ, որ և մի և նոյն ժամանակ նպաստում է մազիր ուսնելուն և նրա արմատները ամրանալուն. շնորհիւ այս պօմադայի տղամարդկանց մօրուքը ստանում է երկարութիւն, նոյնպէս բնական փայլ գլխի մազերի և մօրուքի վրա (մինչև անգամ պօմադայի կարճ ժամանակվայ գործածելուց յետոյ). միաժամանակ այս պօմադան պահպանում է մազերը վաղաժամ սպիտակելուց մինչև անգամ ծերութեան հասակում։

Սրուակի գինը 3, 5 և 8ր ռուբլի։

Հասանելիք գումարը ստանալուց յետոյ ամեն օր պօստով ուղարկվում են աշխարհի ամեն կողմերը հէնց ֆաբրիկայից, ուր որ ուղարկվելու են պատուէրները։

ANNA CSILLAG

WIEN 1. Graben 14.

Գլխաւոր պահեստը Թիֆլիսում, Բագում և Բաթումում դեղավաճառային Կովկասեան Առևտրական ընկերութեան գլխաւոր պահեստներում.

21—26

ԼՈՒՍԱՏՊԱՐԱՆ

Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ

Ընդունում է լուսատիպ գեղարուեստական գործերի պատուէրներ։

1) Մեծադիր, գրքերի ու տրօֆիների համար և բաց-նամակներով։

2) Յաջողութեամբ պատրաստում է ՑԻՆԿԻ ԿԼԻՇԷՆԵՐ մատչելի գներով և ըստ պահանջի արագ։

3) Վաճառվում են բաց նամակներ գործիչների, աւերակների և տեսարանների նկարներով. 1-ը 5 կօպ., 10-ը—40 կ., 100—3 ր. և աւելին զիջումով։

Դիմել՝ Фото-цинкографія С. Согомоняна Тифлисъ, Базарная 22. կ. ե. ո. 3—5

Բացուած է 1904 տարւոյ բաժանորդագրութիւնը

ԲԱՆԱՍԷՐ

ազգային, գրական եւ գիտական

ԱՄՍԱԹԵՐԹ

ա. «Բանասէր» կը հրատարակէ ազգային յառաջադիմութեան վերաբերեալ խմբագրական տեսութիւններ։

բ. Բանասիրական յօդուածներ՝ ազգային պատմութեան և մատենագրութեան վերաբերեալ։

գ. Օտարազգի նշանաւոր հանճարներու գրուածոց թարգմանութիւններ։

դ. Հայ աշխարհագրական և ազգագրական յօդուածներ։

ե. Նոր հրատարակուած գրքերու վրայ բընութագրական տեղեկութիւններ։

զ. Լեզուաբանական և ոտուդարանական յօդուածներ։

է. Ազգային լրագրութեան մէջ տեսնուած կարեւոր յօդուածներու վրայ դիտողութիւններ։

ը. Գիտական նորութիւններ։

«Բանասէր»-ին կաշխատակցին յայտնի գրողներ թէ Կովկասէն և թէ Ցանկաստանէն։

Բաժանորդագինն է տարեկան 15 ֆր.—6 ռուբլի—3 դոլլար։

Կը խնդրենք խոնարհաբար մեր պատուական պաշտօնակիցներէն, որ բարեհաճին իրենց թերթին մէջ հրատարակել մեր ներկայ ծանուցումը։

Մեր հասցէն է՝ Basmadjian, 112, Bd. Rochechouart. Paris (18). ո. 3—3

Մի երիտասարդ, որ լաւ ծանօթ է գրագրութիւնների, թէ հայերէնի և թէ ռուսերէնի հետ, վարել է հոգեւոր կառավարութեան քարտուղարի պաշտօնը, իր ժամապատասխան տեղ է որոնում, ձեռնտու պայմաններով. ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրատանը։ 3—5

ԾԱԽՎՈՒՄ Է ԷԺԱՆ ԼԱՒ ՏԵՂ

Պեսկովսկի փողոցից քիչ վեր, ս. Կարապետակի պողեմի վրա, դատարկ տեղ, լաւ դիրքով, որտեղից բացվում է ընդարձակ տեսարան, փողոցում կոյուղի. 37—40 քառ. սաժէն։ Դիմել, Հաւլաբար, Լազարեվսկի փողոց, Մուբայդովի տուն, № 49. Յ. Ե.-ին։ 3—10

ԹԷՅԻ ԱՌԵՒՏՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վ. ՎԻՍՕՑԿԻ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Մատակարարողներ տանն ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԻՇԽԱՆ ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՕԼԱՅԵՎԻՉԻ և Նորին Մեծութեան Պարսից Շահի

Հիմնական դրամագլուխ 6,000,000 ռուբլի։ Տարեկան շրջանառութիւն 20000000 ռուբլուց աւելի

Շնորհիւ մեր թէյերի բարձր յատկութեան, առաւելապէս իրանց ուժեղ արոմատով, լաւ համով և թունդ գոյնով, մեր ֆիրման Մեր խանութներում, որոնք գտնվում են Մոսկվայում և ԵՒՐՕՊԱՅՈՒՄ բոնից առաջնակարգ տեղերից մէկը մեր ծախած թէյի քանակութեամբ։ Օդեսայում՝ մեր սեփական շինութիւններում, աշխատում է 1500 մարդուց աւելի։

Մեր ֆիրմայի թէյը գտնվում է Ռուսաց Պետութեան բոլոր մագազիններում։

Մեր թէյն առնելու ժամանակ խնդրում ենք պ.պ. գնողների ուշադրութիւն դարձնել մեր առևտրական մարկայի՝ նաւի՝ ճշգրտութեան վրա, որ հաստատված է պետութիւնից, և պահանջել Վիսօցկու թէյը՝ նաւով։

Վ. ՎԻՍՕՑԿԻ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրասենեակը գտնվում է Մոսկվայում։

Բաժանմունքները.—Օդեսայում, Վարշավայում, Ռոստովում Դոնի վրա, Եկատերինբուրգում, Խարկովում, Թիֆլիսում, Բիգայում, Վիլնոյում, Սիմֆէրոպոլում, Նիժէգորոդեան և Իրբիտսկի տօնավաճառներում։

Անդրկովկասի և Անդրկասպեան երկրների համար բաժանմունքը Թիֆլիսում գտնվում է Մէյդանում, Ժէլէզնի բեռդ, տելէֆոն № 32։

Ընկերութեան հասցէն Մոսկվայում և բաժանմունքներում.—Թէյի առևտրի ընկերութիւն Վ. ՎԻՍՕՑԿԻ և Կ°.

Հեռագրների համար.—«ԿԱՐԱԲԼԻԿ»։

Թէյ ուղարկվում է Պարսկաստան տրանզիտով և այդ ժամանակ յետ է ստացվում ծաքսը։

16—20

Дозволено Цензурою. Тифлисъ, 1-го апрѣля 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81.